AZG NEW 1.QXD 6/18/2009 11:51 PM Page 1

Ազգ
Azg
19 ՅՈՒՆԻՍ 2009 ՈՒՐԲԱԹ 113 (4249)
ISSN: 1829-1651

# Ռուսաստանն առաջարկում է ՀԱՊԿ-ի, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի, Եվրոմիության եւ ԱՊՀ-ի ղեկավարների պաշտոնական հանդիպում

ՄՈՍԿՎԱ, 18 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ։ Ռուսաստանը նպատակահարմար է համարում եկող տարի անցկացնել առաջատար միջազգային այն կազմակերպությունների ղեկավարների հանդիպում, որոնք շահեր ունեն եվրատլանտյան գոտում։ «Մենք առաջարկում ենք 2010 թվականին անցկացնել եվրատլանտիկայում գործող միջազգային հինգ կազմակերպությունների՝ ՀԱՊԿ-ի, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի, Եվրոմիության եւ ԱՊՀ-ի ղեկավարների պաշտոնական հանդիպում, որտեղ կքննարկենք նրանց ընդունած անվտանգության ռազմավարությունները եւ համակարգենք մոտեցումները անվտանգության միասնական տարածություն ձեւավորելու նպատակով», այսօր կայացած ճեպազրույցի ժամանակ ասել է ՌԴ-ի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Անդրեյ Նեստերենկոն։

# Ինչպես էին հայերը երկրաշարժին դիմակայում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Երկրաշարժի մասին առաջին լուրը հայտնեց «Հայլուրը», երկրաշարժից կես ժամ հետո, բայց դա անորոշ, ոչինչ չասող լուր էր. 10 րոպե հետո պարզ դարձավ, որ մարդիկ լքում են իրենց բնակարանները եւ հանգրվանում բակերում եւ մոտակա այգիներում։ Բոլորը միաժամանակ սկսեցին զանգահարել ծանոթ-բարեկամի, հայտնել, թե երկրաշարժը մինչեւ ժամը 3-ը կրկնվելու է։ Մեկ էլ հասկանալի դարձավ, որ ամբողջ Երեւանը զանգում է իրար, «Բիլայնն» ու «Վիվասելը» չդիմացան ծանրաբեռնվածությանը՝ կապ չկար։ Անկապ Երեւան էր։ Դե, որ կապ չկար՝ դրսի ժողովուրդը հեռուստացույցների մոտ նստած ժողովրդից լուր չէր ստանում՝ ի՞նչ ասացին, իսկ դրսում էլ անթել հեռախոսը, այսինքն՝ ասեկոսեների մակարդակով տարածվող լուրն իր գործն անում էր։ Տես էջ 2

ԱՅՑ

# Սիրիայի նախագահը կարեւորել է ժողովրդի ինքնորոշման իրավունքը հարգելը

Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադը, երեկ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավիրած պաշտոնական ընթրիքի ժամանակ, այն միտքն է հայտնել, որ «կողմնակալ եւ անպատասխանատու քաղաքականությունները հանգեցրին պատերազմների եւ հակամարտությունների ծագմանը, որոնց բռնկումն անհեթեթ է քսանմեկերորդ դարում՝ իրավունքի, արդարության, հավասարության, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքների տարածման համար մղած երկար պայքարից հետո»։

Դիմելով Հայաստանի նախագահին, նա նաեւ ասել է. «Մենք ակնկալում ենք միասին աշխատել, նաեւ՝ գործող եւ համապատասխան կողմերի հետ՝ Միջին Արեւելքի, Կովկասի եւ Միջին Ասիայի տարածաշրջաններում խաղաղության, անվտանգության եւ կայունության հաստատման համար, քանի որ այս ամենն ազդեցություն ունի աշխարհում կայունության եւ անվտանգության հաստատման գործում, եւ մենք վստահ ենք, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հարգելը, ինչպես նաեւ միջազգային որոշումներն ու միջազգային իրավունքը հարգելը եւ երկխոսության կարեւորության համատեղ համոզմունքի վրա հիմնված իրավական կամքը բավարար հիմք են աշխարհում բոլոր ճգնաժամերն ու հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու համար։ Այսպիսով, մենք խրախուսում ենք այն դրական քայլերը, որոնց ականատես ենք եղել հայ-թուրքական հարաբերությունները, եւ արտահայտում ենք մեր պատրաստակամությունը այս հարաբերությունների ամրապնդմանը նպաստող որեւէ ջանք գործադրելու համար»։

Ա. Ս.

# Հակամարտության կարգավորում՝ տարբեր ուղիներով, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերո՞վ

Ադրբեջանը եւ Ճապոնիան կողմ են հանդես գալիս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բարեփոխմանը։ «Ինտերֆաքս Ադրբեջան» գործակալության փոխանցմամբ, այդ մասին նշվում է Ադրբեջանի եւ Ճապոնիայի արտգործնախարարությունների համատեղ հայտարարության մեջ, որ տարածել է Ադրբեջանի ԱԳՆ-ն։

Հաղորդագրության համաձայն, Տոկիոյում Ճապոնիայի եւ Ադրբեջանի արտաքին գերատեսչությունների ղեկավարների հանդիպմանը կողմերը ՄԱԿ-ի շրջանակներում արդյունավետ համագործակցության հույս են հայտնել, ընդգծելով իրենց ցանկությունը համատեղ աշխատելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում մշտական եւ ոչ մշտական անդամ-երկրների թվի մեծացման ուղղությամբ։

Հետաքրքրական է, որ, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, «երկու նախարարները ընդգծել են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման կարեւորությունը Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում տարբեր ուղիներով, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերով»

Ա. Հ.

# Ջերմ բարեկամություն եւ տնտեսական հարաբերությունների ցածր մակարդակ

## *Հայ-սիրիական տնտեսական կապերի բարելավման են կոչում երկու երկրների նախագահները*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադի Հայաստան կատարած այցելության շրջանակներում երեկ տեղի ունեցավ հայ-սիրիական գործարար համաժողովը, որին մասնակցեցին Հայաստանի եւ Սիրիայի նախագահներ՝ Սերժ Սարգսյանը եւ Բաշար ալ Ասադը։

Հայաստանի նախագահը, մատնանշելով հայ-սիրիական ամուր բարեկամությունն ու ջերմ հարաբերությունները, ափսոսանք հայտնեց, որ տնտեսական հարաբերությունները նույն մակարդակը չունեն։ Նա կարեւորեց, որ տնտեսական հարաբերությունները ձգտեն հավասարվել քաղաքական հարաբերություններին։ Ըստ Սերժ Սարգսյանի, դա հասանելի թիրախ է, առավել եւս, որ սիրիացի գործարարների շրջանում հայ գործարարները լուրջ ներկայություն ունեն։ Նա խնդրեց Սիրիայի մեր հայրենակիցներին նպաստել երկու երկրների հնարավորությունների բացահայտմանը։ Հայաստանի նախագահը նշեց, որ երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար իրավապայմանագրային դաշտ է ձեւավորվել՝ մասնավորապես այս այցի շրջանակներում կնքվել է ներդրումների խրախուսման եւ պաշտպանության պայմանագիր։ Սերժ Սարգսյանը համոզմունք հայտնեց, որ մեծ ներուժ կա գիտատեխնիկական, էներգետիկայի, քաղաքաշինության, զբոսաշրջության, բանկային համակարգում եւ այլ ոլորտներում համագործակցության համար։




Տես էջ 3

# ԱՄՆ պետքարտուղարության զեկույցում Հայաստանը դասվել է 2-րդ խմբի երկրների շարքում

Մեր երկրում վերջին մեկ տարում զգալի քայլեր են ձեռնարկվել հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիկինգ) դեմ պայքարի ակտիվացման, կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացման եւ այդ հանցագործությանը զոհ դարձած անձանց աջակցության կազմակերպման ուղղությամբ։ Պետության կողմից ավելացվել է ֆինանսական մասնակցությունը՝ վերականգնողական կենտրոններում մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված անձանց աջակցելու առումով։ Ահա այդ չարիքի դեմ տարվող Հայաստանի իշխանությունների արձանագրած առաջընթացը իր արտացոլումն է գտել հունիսի 16-ին ԱՄՆ պետքարտուղարության հրապարակած մարդկանց շահագործման (թրաֆիկինգ) վերաբերյալ ամենամյա զեկույցում, որում անդրադարձ է արվում աշխարհի տարբեր երկրներում ստեղծված իրավիճակին եւ դրա դեմ տարվող պետությունների համապատասխան քայլերին։ Մեր երկիրը չորս տարի անընդմեջ 2-րդ խմբի հատուկ վերահսկման ցուցակում գտնվելուց հետո, այս տարի իր գործունեության արդյունքում դասվել է 2-րդ խմբի երկրների շարքում։ Իսկ այդ առաջընթացում նաեւ մեծ դեր են խաղացել լրագրողները, իրենց հրապարակումներով։

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Շարունակում ենք Վիլյամ Սարոյան-Մանուել Թոլեգյան զրույցի հրապարակումը։ «Գրական նամականի» էջը ներկայացնում է Գյուստավ Ֆլոբերի երեք նամակն ուղղված ֆրանսիացի կին գրող Ժորժ Սանդին՝ Կարպիս Սուրենյանի թարգմանությամբ։ Հանդիպում Ռաֆայել Իսրայելյանի 100-ամյակին նվիրված 2008-ին տպագրված պատկերագրքի հեղինակների՝ ճարտարապետության դոկտոր Լոլա Դոլուխանյանի եւ լուսանկարիչ Պողոս Պողոսյանի հետ։ Հալեպահայ բժիշկ Ռոբեր Ճեպեճյանի 100-ամյակի առիթով Շահեն Խաչատրյանն անդրադառնում է նրա հոգու մասնագիտությանը՝ նկարչությանը։ Ծագումով հայ բալետի պարուհի, ներկայումս Իսպանիայում ապրող Թամարա Չինարովա Ֆինչի «Պարելով դեպի անհայտը. իմ կյանքը «Բալե Ռյուսում» եւ նրանից հետո» հուշագրքից մի հատված՝ Արծվի Բախչինյանի թարգմանությամբ։ Ժողարվեստի վարպետները շարքից Էսմա Ավետիսյանը ներկայացնում է Արտաշես Պետրոսյանին։

Ս. Բ.

# «Մուսկուլ Գագոյի» հանցավոր խումբը կալանավորվել է

Մայիսի 23-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանի նկատմամբ տեղի ունեցած մահափորձի մասին **«Ազգը»** տեղեկացրել էր։ Փաստի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունը հարուցել էր քրեական գործ ՀՀ քր. օր.-ի 31-305, 235 եւ 236 հոդվածների հատկանիշներով։ ԱԱԾ մամուլի ծառայությունից տեղեկացանք, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել, հայտնաբերվել եւ կալանավորվել են հանցագործության անմիջական կատարողներն ու մասնակիցները՝ ութ անձ, որոնց թվում նաեւ հանցավոր խմբի պարագլուխ՝ «Մուսկուլ Գագո» մականվամբ Երեւանի բնակիչ Գագիկ Գաբրիելի Մաթեւոսյանը, որը 1992-1997 թթ. ծառայել է ՆԳ նախարարության ներքին զորքերի «Չղջիկներ» անվանումը ստացած հատուկ նշանակության ստորաբաժանումում որպես հրամանատարի տեղակալ։ Վերջինիս բնակարանի եւ ավտոնակի խուզարկությամբ, բացի գործով անցնող իրեղեն ապացույցներից, հայտնաբերվել եւ առգրավվել են աննախադեպ քանակությամբ զենք-զինամթերք, պայթուցիկ նյութեր, հեռակառավարվող պայթուցիկ սարքեր։ Իսկ տանը կից կառույցում հայտնաբերվել են նաեւ ընդհատակյա քիմիական լաբորատորիա, բազմատեսակ քիմիական նյութեր՝ պայթուցիկ սարքեր թունավոր նյութեր պատրաստելու համար։

Պարզվել է նաեւ, որ հանցագործության պատվերը Երեւանի բնակիչ Ռաֆայել Սուրենի Մասումյանի միջոցով տվել է ՀՀ մաքսային կոմիտեի նախկին աշխատակից Ռոբերտ Ալբերտի Երիցյանը, դրա դիմաց վճարելով 150.000 ԱՄՆ դոլար։ Վերջինիս նկատմամբ հայտարարվել է միջազգային հետախուզում։ Ձեռնարկվում են համապատասխան որոնողական միջոցառումներ նրան հայտնաբերելու եւ ձերբակալելու ուղղությամբ։ Մինչ հանցավոր խմբի անդամների կալանավորումը Ռաֆայել Մասումյանը դիմել էր փախուստի եւ թաքնվել Վրաստանում։ Տեղի հատուկ ծառայությունների եւ Վրաստան մեկնած ՀՀ ԱԱԾ օպերատիվ խմբի հետ համատեղ իրականացված միջոցառումների ընթացքում Թբիլիսիի օդանավակայանում Վիեննա մեկնելիս Ռաֆայել Մասումյանը ձերբակալվել եւ կալանավորվել է։

Իրականացվում են նաեւ հանցավոր խմբի նախկինում կատարած այլ հանցագործությունների բացահայտման միջոցառումներ։

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW 2.QXD 6/18/2009 11:50 PM Page 1



# Թրաֆիկինգը եւ նրա դեմ տարվող պայքարը

Թրաֆիքինգ երեւույթը չարիք է բոլոր պետությունների համար, որը գնալով ավելի է ծաղկում: Տարեկան աշխարհում թրաֆիքինգի զոհ են դառնում 4.000.000 մարդ: Թմրադեղերից, զենքի առեւտրից հետո թրաֆիքինգը 3-րդ խոշոր բիզնեսն է ամբողջ աշխարհում, եւ հենց այդ է պատճառը, որ այդ չարիքի դեմ հիմնովին հնարավոր չէ պայքարել: Այնուհանդերձ բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, կառավարություններ լայն թափով իրականացնում են կանխարգելիչ միջոցառումներ: Մարդկանց թրաֆիքինգը կապակցված է միգրացիայի, աշխատանքի, գենդերի եւ առողջական հիմնախնդիրների, մարդու իրավունքների եւ քրեական արդարադատության հետ: Այստեղ գործում են առաջարկի եւ պահանջարկի բարդ կանոններ: Այս երեւույթը համայն աշխարհում բացասաբար է անդրադառնում տղամարդկանց, կանանց եւ երեխաների վրա: Մարդկանց թրաֆիքինգն այս կամ այն կերպ ազդում է բոլոր պետությունների վրա եւ որեւէ մեկը «անձեռնմխելի» չէ, եւ որպես կազմակերպված հանցավորության բաղադրիչ, ամեն երկրում դրսեւորվում է անօրինական գործունեության այլ տեսակների, օրինակ՝ թմրադեղերի անօրինական շրջանառության հետ: Մարդկանց թրաֆիքինգ կարող է տեղի ունենալ նաեւ միեւնույն պետության ներսում, եւ հիմնականում ներկայացվում է մեկ անկյան տակ՝ կանանց թրաֆիքինգ սեռական շահագործման նպատակով, չնայած այդ երեւույթի բազմաթիվ տեսակներ կան, օրինակ՝ աշխատանքային թրաֆիքինգ, տղամարդկանց եւ երեխաների թրաֆիքինգը կենցաղային ստրկության կամ գյուղատնտեսության, տեքստիլ արդյունաբերության եւ շինարարության ոլորտներում հարկադիր աշխատանքը, օրգանների վաճառքը: Կանանց թրաֆիքինգը տեղի չի ունենում բացառապես հարկադիր մարմնավաճառության նպատակով. այն կարող է ունենալ շատ այլ դրսեւորումներ՝ կենցաղային աշխատանքից մինչեւ հարկադիր ամուսնություն կամ հարկադիր մասնակցություն այլ հանցավոր գործունեության:



Անկասկած, հասարակության համար մեծ նշանակություն ունի այնպիսի հանցավոր գործունեության բացահայտումը եւ լուսաբանումը, ինչպիսին թրաֆիքինգն է: Լրագրողական հետաքննությունը, որը հաճախ անցկացվում է գաղտնի, կարող է լույս սփռել թրաֆիքինգ իրականացնողների եւ նրանց հետ գործակցող «բիզնեսցանցերի» գործելակերպի վրա: Սակայն հենց այդ փնտրտուքների ճանապարհին լրագրողները հանդիպում են գործնական եւ բարոյական բազմաթիվ խոչընդոտների: ՀՀ կառավարությունը, որին կից գործում է պետական հատուկ հանձնաժողովը (նախագահ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյան, աշխատանքային խմբի ղեկավար Ջյունիկ Աղաջանյան) որն էլ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի եւ ԵԱՀԿ-ի հետ համատեղ կազմակերպել Ծաղկաձորում եռօրյա սեմինար «Լրագրողների ճանաչողական վերապատրաստում, թրաֆիքինգի լուսաբանման հմտություններ» թեմաներով: Սեմինարի ընթացքում եղան բազմաթիվ ելույթներ՝ ԿՀԴՊ վարչության թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի պետ Տիգրան Պետրոսյան, ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության պետ Արա Երեմյան, ՄԱԿ ԶԾ-ի, ԵԱՀԿ-ի եւ ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Եռօրյա աշխատատար սեմինարի ընթացքում ներկայացվեցին թրաֆիքինգի դեմ տարվող պայքարի հիմնահարցերը, պրոբլեմը մատչելի ու օգտակար ներկայացնելու ձեւերն ու զոհերի հետ հարցազրույցներ վարելու հմտությունները: Սեմինարի աշխատանքներին միացավ նաեւ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը: Նա կարեւորելով լրատվամիջոցների դերը թրաֆիքինգի դեմ պայքարում, առաջարկեց սերտ համագործակցել, որպեսզի հնարավորինս կանխվի այդ չարիքը, որը նաեւ բույն է դրել ներքին թրաֆիքինգի ձեւով: Ցավալի էր, որ այդքան կարեւոր սեմինարին հրավիրվել էր մասնակցելու «Հույս եւ օգնություն» ՀԿ-ի ղեկավար Ենոք Շատվորյանը, որը չգիտես ինչու իր ելույթը սկսեց «Ես զզվում եմ լրագրողներից...» արտահայտությամբ: Իհարկե ներկա գտնվողները նրան «հակահարված» տվեցին, սակայն պետք է նշենք, որ գրանտակեր այդ ՀԿ-ն հենց լրագրողների նյութերն է օգտագործում ու չգիտես ինչու հենց այդ ՀԿ-ն էլ մշտապես ֆինանսավորվում է: Հարկ է, որ միջազգային կառույցները մանրամասն անդրադառնան այս ՀԿ-ի գործունեությանը, որպեսզի չխանգարի թրաֆիքինգի դեմ համընդհանուր այս աշխատանքներին:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Ինչպես էին հայերը երկրաշարժին դիմակայում

*1-ին էջից*

Մարդկանց այն մասը, որը ձեռք էր թափ տալիս եւ հումորով ժպտում էր (լավատեսները), ի պատասխան ստանում էր հոռետեսների եւ միշտ զգուշավորների հորդորանքը, թե՝ «ռադիոն հայտնեց, հետա կրկնվելու ա»: Կատակի եւ հումորի տալու պրագմատիկների փորձերը հանդիպում էին մի քանի փաստի, որոնք, որքան էլ զարմանալի, տեղի ունեին: Փողոցը բզզում էր դուրս թափված մարդկանցով. «Այրարատ» կինոթատրոնին հարակից հատվածում ով ասես կար՝ ուսանողներ, մոտակա նախարարությունների աշխատակիցներ, հարակից շենքերի բնակիչներ: Ուսանողներին մի երկու ժամով ուղարկել էին դուրս. «Ո՞վ գիտի, գուցե կրկնվի», ասել էին: Նախարարություն կար, որտեղ ասել էին՝ տուն գնացեք: Ու մինչ սեյսմիկ պաշտպանության արեւմտյան ծառայության տնօրեն Արամ Զավադյանը հերքում էր, թե «նման բան եթե լիներ, կասեինք», համ էլ ավելացնում էր՝ «վերլուծում ենք, եթե հավելյալ ինֆորմացիա ունենանք՝ կտեղեկացնենք», մարդիկ բացել էին կասկածամտության տոպրակը՝ տանը նստած հո չէին սպասելու ինֆորմացիային: Երկրաշարժի հիշողությունը գոնե այս սերնդի արյան մեջ դեռ ներկա՝ մարդկանց դժվար էր համոզել, որ «սեյսմիկ իրավիճակը հանրապետությունում վերահսկվում է ծառայության կողմից, գտնվում է ֆոնային տիրույթում, եւ ոչ մի հիմք չկա խուճապի համար»:

Իսկ ասեկոսեն ցերեկվա 13:30-ի եւ 15:00-ի արանքում թեժացավ այս ենթատեքստով. «Ներքին կարգով մարդկանց աշխատավայրերից տեղահանում են, հաստատ երկրաշարժ է՝ մարդկանց չեն ասում, որ խուճապ չլինի», եւ այլն: Այսինքն՝ մի պահ զանգվածային փսիխոզ էր:

Չնայած Հայաստանը ժամանակ առ ժամանակ մի քանի խոշոր երկրաշարժ տեսել է, այնուամենայնիվ խոշոր հաշվով հայերիս մեծ մասը ենթագիտակցորեն չի հավատում, որ հենց իրեն դա կարող է պատահել: Ու էլի չնայած մենք համապատասխան նախարարություն ունենք, որը ժամանակ առ ժամանակ եթերներով անդրադարձ է անում խնդրին, անգամ զանազան դրամաշնորհներով ֆիլմեր են նկարվել, թե ինչպե՞ս պետք է պահի մարդն իրեն երկրաշարժի ժամանակ, բայց դրանք առավել տվյալ պահի քարոզչական խնդիր են լուծում եւ բոլորովին հայ մարդուն գրագետ չեն դարձնում՝ վարվելակերպի առաջին քայլերը ճիշտ կատարելու առումով: Ճապոնացին, օրինակ, շատ լավ գիտի, թե ինչպե՞ս է վարվելու, որ չմնա ընկնող առաստաղների եւ կոտրվող ծառերի տակ: Բայց ճապոնացուն առավել հետաքրքրում է ժամանակին ստացված տեղեկատվությունը, որն ի վերջո նա ստանում է: Երեկ էլ, երբ երկրաշարժ եղավ՝ 10 րոպե անց արդեն տեղեկատվություն էինք փնտրում, եւ դա առաջինը ստացանք ինտերնետից, բայց ինտերնետը, գիտենք, բնակչության լայն խավին հասանելի չէ: Կուզեինք միացնել հեռուստացույցը, եւ արագ, պատահածից կես ժամ հետո, ուղիղ հեռախոսակապով գոնե, մասնագետից ստանալ այդ պահին հայտնի տեղեկատվությունը, որ ապատեղեկատվությունն իր սեւ գործը չանի: Մանավանդ՝ սեյսմաակտիվ գոտու ժողովուրդ ենք, նստած մեծ խզվածքի վրա, մոտիկ ատոմակայանն էլ վրադիր:

Երեւի մեկ-մեկ պետք է հայերիս բնությունը սթափեցնի, որ ինչպես նավում եւ ինքնաթիռում է փրկագոտին պատրաստ, հնարավոր երկրաշարժի դեպքում էլ հայերս գոնե դիմագրավելու առաջին երեք կանոնն իմանանք, իսկ մեր էլեկտրոնային լրատվամիջոցներն էլ քամու արագությամբ աշխատեն: Լավ է դեռ, երեկոյան կողմ, այնուամենայնիվ, թե՛ լրատվամիջոցները, թե՛ մասնագետներն իրենց առաքելությունը կատարեցին:

ՌԵՊԼԻԿ

# Երբ թեստ կազմողն ինքը ծանոթ չէ բնագրին

**Հունիսի 16-ին ելույթ ունենալով «Շանթ» հեռուստատեսության «Հեռանկար» ծրագրով՝ այս տարվա հայոց լեզու եւ գրականություն առարկայի միասնական քննական թեստի կազմողներից Սեյրան Գրիգորյանը քիչ էր մնում մեղադրեր Հովհ. Թումանյանին, որ վերջինս «Փարվանա» բալլադում անորոշություններ է թույլ տվել կտրիճների՝ թիթեռ դառնալու հարցում եւ «որոշակի չի նշել», թե ե՞րբ եւ ի՞նչ հանգամանքներում են նրանք վերածվել թիթեռների: Սա ակնհայտորեն փաստում է այն իրողությունը, որ մեր թեստեր կազմողները խորությամբ չեն ընթերցել հայ դասականների երկերը կամ արդեն վարժվել են դրանք նենգափոխելու հարցում: Այսպես. «Փարվանա»-ում շատ պարզ ու հստակ գրված է.**

***Շտապելուց թեւ են առել,***
***Դարձել թեթեւ թիթեռներ.***
***Ու տակավին հուր տեսնելիս՝***
***Մեջն են ընկնում անհամբեր:***

**Շատ որոշակի նշվում է թիթեռ դառնալու պատճառը («շտապելուց») եւ միանգամայն պարզ է նաեւ հաջորդականությունը. սկզբում թիթեռ են դառնում, ապա նոր պտտվում կրակի շուրջը (թեստի Ա 45 առաջադրանքի 1-ին պատասխանում հակառակ դասավորությունը կա):**

**Ինչ վերաբերում է Եղիշե Չարենցի 2 պոեմների՝ «Դեպի լյառն Մասիս» եւ «Խմբապետ Շավարշը», բաղդատությանը, ապա ավելի քան անհերքելի է, որ համեմատության 2 բաղադրիչներից միայն մեկն է ծրագրային երկ եւ զարմանալի է, որ այս թերացումն առայժմ չի ընդունվում որպես սխալ եւ միավոր չի գրանցվում դիմորդների օգտին:**

**ՇԱՀԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**
**Ծնող**

ՇԻՐԱԿ

# Գյուղացին կաթի իրացման խնդիր ունի

**Մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրած կաթի իրացման հիմնախնդիրներին էր նվիրված Գյումրու «Արաքս» հյուրանոցային համալիրի կոնֆերանսների սրահում տեղի ունեցած քննարկումը, որը կազմակերպել էր «Շիրակի մրցունակության կենտրոն» (ՇՄԿ) հիմնադրամը: Վերջինս 2004 թվականից իրականացնում է մարզի տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրեր, իսկ 2006-ից աշխատում է նաեւ գյուղական համայնքներում: Հիմնադրամի աջակցությամբ մարզի տարբեր տարածքներում ստեղծվել եւ գործում են կաթի մթերման առայժմ երեք կետեր, պատրաստ է ու շուտով կգործի նաեւ չորրորդը: Սակայն, ինչպես նշեց ՇՄԿ-ի գործադիր տնօրեն Գայանե Ավագյանը, ըստ ստացվող ահազանգերի, վերջին շրջանում գյուղացին լուրջ դժվարությունների առաջ է կանգնել կաթի իրացման հարցում: Եթե դեռ մեկ տարի առաջ վերամշակող ձեռնարկությունները մրցակցում էին արտադրող ֆերմերից կաթը տանելու հարցում, ապա այսօր դրա իրացումը զգալի չափով պակասել է, գյուղացին շատ դեպքերում չի կարողանում կաթը վաճառել: Նշվեց, որ կապված համաշխարհային շուկայում չոր կաթի՝ կաթի փոշու գների զգալի էժանացման հետ, վերամշակող ձեռնարկությունները կաթնամթերքի արտադրության համար ավելի շատ են օգտագործում տնտեսապես անհամեմատ շահավետ կաթի փոշին, որն էլ հանգեցնում է հում կաթի գնման ծավալների, ինչպես նաեւ գնման գնի նվազման:**

**Հատկապես Շիրակում այս խնդիրը ցավոտ է ոչ միայն առավել աղքատ մարզ լինելու, այլեւ այն պատճառով, որ այստեղ անասնապահությունը գյուղատնտեսության վճռորոշ ճյուղ է, առանց որի զարգացման գյուղացին պարզապես չի կարողանա գոյատեւել: Հրավիրելով կաթ արտադրողից ու կաթ վերամշակողից մինչեւ սպառող ամբողջ շղթայի, գյուղատնտեսության աջակցման տարբեր օղակների ներկայացուցիչների, քննարկման կազմակերպիչները փորձել էին խոսակցություն ծավալել ստեղծված իրավիճակի հաղթահարման հնարավոր ուղիների, դրա համար անհրաժեշտ քայլերի մասին: ՀՀ գյուղնախարարության ագրովերամշակման եւ սննդամթերքի անվտանգության վարչության պետ Գեւորգ Ղազարյանը, Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոնի տնօրեն Գագիկ Սարդարյանը, «Աշտարակ կաթ» ընկերության ներկայացուցիչ Ռաֆիկ Մուրադյանը, Ամասիայի գլխավոր պանրագործարանի տնօրեն Նորայր Շաբոյանը, ֆերմերային տնտեսության ղեկավարներ Արա Գեւորգյանը, Գեւորգ Հովհաննիսյանը, մյուս ելույթ ունեցողները, տարբեր կողմերից ներկայացնելով կաթնամթերքի շուկայում առկա իրավիճակը, ընդհանուր առմամբ կարեւորեցին ճյուղի ինտենսիվացման խնդիրները, որոնք նաեւ պետք է բերեն ստացվող արդյունքի ավելացման եւ արտադրանքի ինքնարժեքի ցանկալի նվազման: Բայց այս հարցերը մեր գյուղացին մենակ չի կարող լուծել, ուստի նշվեց նաեւ վերամշակողների ու հատկապես պետության աջակցության կարեւորությունը:**

**Գ. Մ.**

# Ներգրավեց պոռնկության մեջ ու ձերբակալվեց

**Հունիսի 17-ին, ժամը 14.45-ի սահմաններում, ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության աշխատակիցները Արտաշատի խճուղուց բերման են ենթարկել 41 տարեկան Գագիկ Մ.-ին ու ձերբակալել: Պարզվել է, որ վերջինս այս տարվա հունվար ամսին, շահադիտական նպատակով երկու կանանց՝ 19-ամյա Սեդա Բ.-ին եւ 21-ամյա Սիրուն Բ.-ին ներգրավել է պոռնկությամբ զբաղվելու: Նույն օրը, վեց ժամ անց նույն վայրից բերման են ենթարկել Գագիկ Մ.-ի կնոջը՝ 53-ամյա Սիրվարդ Ա.-ին: Վերը նշված կանանց պոռնկությամբ զբաղվելուն նպաստել է նաեւ Սիրվարդ Ա.-ն: Վերջինիս մատնանշած վայրից հայտնաբերվել է մոտ 34,4 գրամ գորշ կանաչ գույնի, յուրահատուկ հոտով, մանրացված, չորացված կանեփանման զանգված, որն իր հայտարարությամբ պատկանում է ամուսնուն՝ Գագիկ Մ.-ին: Հայտնաբերվել է նաեւ էլեկտրացնցում առաջացնող 1 սարք, որն ուղարկվել է փորձաքննության:**

**Ս. Ս.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 6/18/2009 9:27 PM Page 1



# «Կարեւոր պաշտոնյաներն իրավունք չունեն այս ամռանը բացակայելու»

## Հայտարարեց վարչապետ Տիգրան Սարգսյանը

Մինչ կառավարության նիստի սկսվելը վարչապետ Տիգրան Սարգսյանը, փաստելով, որ բարձրաստիճան շատ պաշտոնատար անձինք դիմում են գրում արձակուրդ վերցնելու, իր զարմանքն է արտահայտել այդ կապակցությամբ: «Բոլորը դիմումը գրում են հենց մեկ ամսով, կարծես թե ոչ մի արտառոց բան չի պատահել, մենք տնտեսական եւ ֆինանսական ճգնաժամն արդեն հաղթահարել ենք, կառավարությունը չի սպասում լարված աշխատանք», ասաց վարչապետը եւ ավելացրեց, որ նման մոտեցումն անընդունելի է: Ըստ նրա, բարձրաստիճան պաշտոնատար անձինք եթե նույնիսկ պետք է գնան արձակուրդ այս ամռանը, ապա՝ կարճաժամկետ եւ Հայաստանում:

«Մեր տնտեսական ցուցանիշներն այս տարի բարվոք չեն, եւ 2009 թ. ամենածանր տնտեսական տարին է մեր կառավարության համար: Այս ամառվա սեզոնը ծանր աշխատանքի սեզոն է լինելու կառավարության համար, որովհետեւ ցուցանիշները դեռեւս շարունակում են վատանալ: Մենք գիտակցում ենք, որ ամենածանր ամիսները լինելու են առաջին ինն ամիսները, տարվա վերջում տնտեսական ցուցանիշները կսկսեն բարելավվել», ընդգծեց վարչապետը:

Այս պահին թիվ մեկ խնդիրը Տիգրան Սարգսյանը համարեց հարկահավաքման խնդիրը, ասելով, որ բոլորը պետք է օժանդակեն պետական եկամուտների կոմիտեին: Նա նշեց, որ գերատեսչությունները շատ անտարբեր են այս խնդրի հանդեպ, եւ առաջարկեց արձանագրային որոշում ընդունել, որ բոլոր նախարարներն ու գերատեսչության ղեկավարներն անձամբ երեք օրվա ընթացքում վարչապետին ներկայացնեն առաջարկություններ, թե իրենց ոլորտում ինչ լրացուցիչ միջոցառումներ կարելի է ձեռնարկել, որպեսզի հարկահավաքման գործում օգնեն պետական եկամուտների կոմիտեին: Վարչապետը նշեց, որ այդ առումով մեծ ներուժ եւ լուրջ խնդիրներ կան առողջապահության, գյուղատնտեսության, տրանսպորտի եւ կապի, շինարարության ոլորտներում:

Հիմնական տնտեսական անկումը պայմանավորված է շինարարության ոլորտում տնտեսական ցուցանիշների վատթարացմամբ, ինչը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանից եկող ներդրումների եւ մասնավոր փոխանցումների նվազմամբ: Նշելով այս մասին, Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ լրացուցիչ միջոցառումներ պետք է իրականացվեն խթանելու շինարարությունը:

Վերջում վարչապետը կրկին ընդգծեց, որ ամռան սեզոնին սկսվում է ամենածանր աշխատանքը, եւ եթե կարողանան այս ամռանը լավ աշխատել, ապա տարվա վերջում դրա արդյունքները տեսանելի կլինեն: «Դրա համար, հարգելի գործընկերներ, այս ազդակները հաղորդեք նաեւ ձեր տեղակալներին, ձեր վարչությունների պետերին: Ամենակարեւոր պաշտոնները զբաղեցնող անձինք իրավունք չունեն ամռանը բացակայելու Հայաստանից», եզրափակեց վարչապետը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Արեւելյան գործընկերության համատեքստում՝ անցում հարեւանությունից գործընկերության

**«Եվրասիա» համագործակցություն հիմնադրամը մի շարք հայաստանյան հասարակական կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնել է «Հարեւանությունից դեպի գործընկերություն» խորագրով միջոցառումների շարք, որ նվիրված է Հայաստանի մասնակցությանը Եվրոպական միության «Արեւելյան գործընկերություն» ծրագրին:**

**Նախաձեռնությունների շարքը երեկ մեկնարկեց «Հակամարտությունների կարգավորման գործընթացը Հարավային Կովկասում՝ Արեւելյան գործընկերություն ծրագիրը» թեմայով քննարկմամբ՝ դիվանագիտական առաքելությունների, միջազգային կառույցների, քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչների մասնակցությամբ:**

**«Եվրասիա» համագործակցություն հիմնադրամի տնօրեն Գոռ Տեր-Գաբրիելյանի ներկայացմամբ, այս նախաձեռնությունը միավորում է մի շարք առաջատար հասարակական կազմակերպությունների, ինչպես Բաց հասարակության ինստիտուտը, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Թրանսփարենսի ինթերնեյշնըլը, Մշակույթի քաղաքակրթության հետազոտման կենտրոնը եւ այլն, թվով տասը, այդպիսով ձգտելով կոալիցիոն միջոցներով Հայաստան-Եվրոպա խնդիրների քննարկումը բարձրացնել նոր մակարդակի:**

**Տեր-Գաբրիելյանը հանդիպման մասնակիցներին ներկայացրեց, որ երեկվա թեմայի՝ «Հակամարտությունների կարգավորման գործընթացը Հարավային Կովկասում. Արեւելյան գործընկերություն ծրագիրը» քննարկումը տեղի կունենա երեք ուղղություններով՝ հայ-ադրբեջանական հարաբերություններ, ղարաբաղյան հակամարտություն, Հայաստան-Թուրքիա հարաբերություններ, ընդհանրապես՝ Հարավային Կովկաս:**

**Աշխատանքային խմբերում քննարկումների արդյունքները կամփոփվեն ու կտարածվեն, իսկ մինչ այդ Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կդիտարկեն, թե ինչ է տալու Արեւելյան հարեւանության ծրագիրն ու ինչ կարող է տալ Հայաստանը:**

**Ա. Հ.**

# ԲՀԿ-ն ՀՀԿ-ից չի նեղացել

Երեւանի քաղաքապետի ընտրությունների արդյունքներից ԲՀԿ-ն գոհ չէ, սակայն ՀՀԿ-ից նեղացած չէ: Ընտրության արդյունքները համարում են ոչ թե գոհացուցիչ, այլ բավարար: «Սակայն դա էլ ԲՀԿ-ի համար համարվում է առաջընթաց», նկատում է Գագիկ Ծառուկյանի մամլո խոսնակ **Խաչիկ Գալստյանը**: Նա չի հավատում, որ ԲՀԿ-ն ՀՀԿ-ից շատ ձայն է տարել: «Ստացել ենք այնքան, ինչքան ստացել ենք եւ կարողացել ենք ձայնը պահել, ինչը առաջընթաց է: Կամա թե ակամա պետք է առնչվենք մեր ազգային նկարագրին, մենթալիտետին, ընտրողների կողմնորոշումներին: Եթե քաղաքակիրթ երկրներում քարոզարշավի ազդեցությունը մարդկանց էլեկտորալ վարքագծի վրա էականորեն մեծ է՝ մոտ 20-30 տոկոս, ապա Հայաստանում նախընտրական քարոզարշավի ազդեցությունը լսարանի վրա էականորեն քիչ է», նկատում է նա:



ԲՀԿ-ն այդ առումով առկա հնարավորությունը օգտագործել է առավելագույնս արդյունավետ: Գալստյանը նկատում է, որ պարզապես հայ ընտրողը կողմնորոշվել է նաեւ այլ շարժառիթներով: Իսկ շարժառիթների օրինական թե անօրինական տիրույթում գտնվելու վերաբերյալ Ծառուկյանի մամլո խոսնակն ասաց. «Եթե քո հարեւանը թակում է դուռը եւ ամեն կերպ խնդրում, աղաչում կամ ազդում է վարքագծի վրա, որպեսզի դու քվեարկես այս կամ այն քաղաքական ուժի օգտին, դա օրինակա՞ն է, թե՞ անօրինական: Կամ, եթե մարդուն փող են առաջարկում, վերցնում է, եւ ձայնը կանխորոշված է լինում: Այս բոլորն առկա են, եւ մենք ըստ էության աչք ենք փակում»:

Ինչպես ասում են, մարդիկ սովորում են սեփական սխալներից: Խաչիկ Գալստյանը նշում է, որ իրենք էլ որպես քաղաքական ուժ թերացել են, հատկապես հանձնաժողովականների, վստահված անձանց ռեսուրսն արդյունավետ օգտագործելու հարցում: Ծառուկյանի մամլո խոսնակը վստահեցրեց, որ այս ամենը հաշվի կառնեն հաջորդ ընտրությանը պատրաստվելիս:

«Ընտրովի պաշտոնների համար աշխարհում ընդունված չէ մանդատները վայր դնել: Մարդիկ մեզ վստահել են: ԲՀԿ-ն երբեք ընդդիմադիր քարոզարշավ չի իրականացրել: Եվ ընդդիմադիր կեցվածքի համար չէ, որ այդ էլեկտորատը կանգնած է մեր կողքին: Հետեւաբար մեր քաղաքական պարտավորությունն է հետեւել մեր քաղաքական կուրսին», նկատեց նա:

Ինչ վերաբերում է ԲՀԿ-ՀԱԿ համագործակցությանը՝ Գալստյանը նշեց, որ այժմ այդպիսի պայմանավորվածություն չկա, սակայն որպես քաղաքագետ չբացառեց նման համագործակցությունը:

### Որպեսզի թիրախ չդառնա

Գագիկ Ծառուկյանը չի մասնակցելու կառավարության ներկայացրած հարկային փաթեթի քվեարկությանը, իսկ կուսակցության պատգամավորները կարող են ազատ որոշում կայացնել: Խաչիկ Գալստյանի խոսքերով՝ Ծառուկյանը դեմ է փաթեթին, հետեւաբար դեմ քվեարկելու դեպքում կդառնա թիրախ: «Թիրախ կդառնա քննադատության առումով: Լինելով խոշոր գործարար եւ հանդես գալով այդպիսի հարկային փաթեթի դեմ, որը նախատեսում է հարկային տեսուչների առկայությունը խոշոր գործարաններում կամ խոշոր գործարար համակարգում, բնականաբար կդիտվի որպես տնտեսական շահախնդրություն», ասաց Գալստյանը: Վերջինս փաստեց, որ եթե ինքն էլ լիներ լրագրող, անպայման այդպես կմտածեր: «Գագիկ Ծառուկյանի եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համար առավել գերակա է փոքր եւ միջին բիզնեսի շահերի պաշտպանությունը եւ եթե հարկային փաթեթը ուղղված լիներ այդ ոլորտի համար առավել ծանր պայմաններ ստեղծելուն, անպայման մենք դեմ կքվեարկեինք: Իսկ եթե մնացած գործարար շրջանակներին դա ձեռնտու է, առավել ձեռնտու է Գագիկ Ծառուկյանի համար: Այստեղ որեւէ պրոբլեմ չկա»:

### Բելառուս կատարած այցի վերաբերյալ

Անդրադառնալով Գագիկ Ծառուկյանի՝ նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հրավերով օրերս Բելառուս կատարած այցին, Գալստյանը նշեց, որ ԲՀԿ նախագահը փորձել է նպաստել հայ-բելառուսական տնտեսական կապի խորացմանն ու ճգնաժամի պայմաններում նոր շուկաներ ապահովել Հայաստանի տնտեսվարողների համար: Սակայն կա նրբերանգ. այդ շուկաներից կարող են գտնվել միայն այն արտադրողները, ովքեր չեն արտադրում այն, ինչ Ծառուկյանը: Հարցին՝ Ծառուկյանը համաձայնեցնո՞ւմ է իր արտերկրյա այցերի օրակարգը նախագահի կամ կառավարության հետ, Գալստյանն ասաց, որ գոյություն ունի հարցերի շրջանակ, որոնք կառավարության բարձրաստիճան այրերի հետ քննարկվում են: «Մեր քաղաքականության մեջ եթե ունես անձնական կապեր, խարիզմա, կարող ես նպաստել միջպետական հարաբերությունների զարգացմանը: Հիշո՞ւմ եք, Հասարակածային Գվինեայում հայ օդաչուներ էին ձերբակալել հեղափոխության մեղադրանքով: Նրանց ազատ արձակման գործում իսկայական դերակատարում ունեցավ Ռուսաստանի հայերի միության նախագահ, հայ գործարար Արա Աբրահամյանը: Անձնական կապը կարող է միջպետական հարաբերությունների մակարդակով առաջխաղացում ապահովել, ինչը Գագիկ Ծառուկյանի դեպքում առկա է», եզրափակեց Խաչիկ Գալստյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ջերմ բարեկամություն եւ տնտեսական ...

*1-ին էջից*

**Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադն իր խոսքում նշեց, որ այս այցը մեծ նշանակություն ունի այն իմաստով, որ չնայած իրենք տեղյակ էին հայկական մշակույթին, բայց լավ տեղյակ չէին Հայաստանին: Նա տեղեկացրեց, որ սիրիական պատվիրակության մեջ մոտ 200 հայեր կան, որոնց նա կատակով անվանեց սիրիական գաղթօջախ Հայաստանում: Սիրիայի նախագահն այն կարծիքը հայտնեց, որ տնտեսական հարաբերությունների զարգացման հնարավորություններ կան առեւտրի, ներդրումների եւ խոշոր նախագծերի ոլորտներում: Նա նշեց, որ ցամաքային կապի բացակայությունը բացասաբար է ազդում երկկողմ հարաբերությունների զարգացման վրա: Ըստ Բաշար ալ Ասադի, հայ-թուրքական հարաբերությունների բարելավումից կշահեն և՛ Հայաստանը, և՛ Սիրիան, և՛ Թուրքիան: Միաժամանակ Սիրիայի նախագահը կարեւորեց օդային կապի առկայությունը երկու երկրների միջեւ, ավելացնելով, որ թռիչքը տեւում է 1 ժամ 45 րոպե: Դա, ըստ նրա, նշանակում է, որ Հայաստանն ավելի մոտ է Սիրիային, քան արաբական աշխարհի երկրներից շատերը՝ Սաուդյան Արաբիան, Քաթարը, Քուվեյթը եւ այլն:**

**Բաշար ալ Ասադի կարծիքով, Իրան-Հայաստան երկաթուղու կառուցումը կնպաստի, որ Հայաստանն Իրանի եւ Իրաքի միջոցով ցամաքային կապ ունենա Սիրիայի հետ: Նա նաեւ հայտնեց, որ նախագիծ է մշակվում Միջերկրական եւ Կարմիր ծովերը երկաթուղով միմյանց կապելու Սիրիայի տարածքով, որը նույնպես կարող են օգտագործել երկու երկրները: Նախագահն առաջարկեց հեշտացնել կամ վերացնել վիզային ռեժիմները երկու երկրների միջեւ գործարարների եւ զբոսաշրջիկների համար:**

**Հայ-սիրիական հարաբերությունների մասին լրագրողների հարցերին պատասխանելով, ՀԱԱՊ նախագահ Մարտին Սարգսյանը նույնպես փաստեց երկու երկրների տնտեսական հարաբերությունների ցածր մակարդակը: Այդ բացը լրացնելու նպատակով Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատն անցյալ տարի հայկական ապրանքների եւ ծառայությունների խոշոր ցուցահանդես էր կազմակերպել Հալեպում, որտեղ նաեւ պայմանավորվածություններ են ձեռք բերվել գյուղատնտեսության, բարձր տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Մարտին Սարգսյանը նաեւ հայտնեց, որ սեպտեմբերին Երեւանում կկայանա սիրիական ապրանքների ցուցահանդեսը:**



**Նշենք, որ Սիրիայից ժամանած գործարարները ներկայացնում են սարքաշինության, սննդի եւ թեթեւ արդյունաբերությունների, դեղագործության եւ քիմիական արդյունաբերության, առեւտրի, զբոսաշրջության եւ այլ ոլորտները: Ինչ վերաբերում է հայ-սիրիական առեւտրաշրջանառությանը, ապա 2008-ին կազմել է մոտ 6 մլն դոլար: Ընդ որում, Հայաստանը հիմնականում ներմուծող երկիրն է եւ Սիրիա արտահանած հայկական ապրանքները կազմում են վերոնշյալ 6 մլն դոլարից՝ 90 հազար դոլարը: Անցյալ տարի ներմուծումը Սիրիայից Հայաստան աճել է, իսկ արտահանումը Հայաստանից Սիրիա՝ նվազել: Մեր երկրից արտահանում ենք սննդամթերք, կարբիդներ, ներկեր, լաքեր, պոմպեր, չափիչ, հսկիչ սարքեր, իսկ Սիրիայից Հայաստան՝ դեղամիջոցներ, կոշիկ, ցիտրուսներ, սննդի եւ թեթեւ արդյունաբերության ապրանքներ, զարդեղեն:**

AZG NEW 4.QXD 6/18/2009 9:27 PM Page 1



## Տարաբնույթ

# Կվերանայե՞ն Հայաստանի ղեկավարները իրենց դիրքորոշումը

Ավելի քան մեկ տարի է, ինչ Հայաստանի ղեկավարները այն տպավորության տակ էին գործում, որ որոշ հարցերում Վաշինգտոնին զիջելով կկարողանան տնտեսական եւ քաղաքական օգուտներ քաղել, զերծ մնալ ժողովրդավարական բացթողումների մեղադրանքներից եւ համոզել Արեւմուտքին, որ չսատարի ներքին ընդդիմադիրներին:

Առաջնորդվելով նման ցանկալի երազանքներով, Հայաստանի կառավարությունը ամեն ջանք գործադրում էր հաճոյանալու Մ. Նահանգներին: Օրինակ, անցյալ տարի, երբ Մարի Յովանովիչը թեկնածու էր առաջադրվել դառնալու Հայաստանում Ամերիկայի հաջորդ դեսպանը, պետքարտուղարությունը խնդրեց Հայաստանին գործի դնել Վաշինգտոնում իր կապերը՝ հեշտացնելու համար Սենատում նրա թեկնածության հաստատումը: Պետքարտուղարությունում վախենում էին, որ իր նախորդի՝ Ռիչարդ Հոգլենդի բախտին կարժանանա եւ Սենատում չի հաստատվի Յովանովիչի թեկնածությունը: Հայաստանի կառավարությունը պարտավորվեց օգնել՝ հույս ունենալով հավանաբար, որ Մ. Նահանգները ու նորանշանակ դեսպանը կփոխհատուցեն հետագայում որոշ կնճռոտ հարցերում առավել բարյացակամ գտնվելով:

Հաջորդ օրինակը Թուրքիայի հետ սահմանը բացելու եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ բանակցություններ վարելն էր: Երեւանում ենթադրում էին, որ այդ քայլը մեր երկրին ձեռնտու է, մինչ ամերիկացի պաշտոնյաները առաջնորդվում էին իրենց իսկ երկրի շահերից: Հետագայում պարզ դարձավ նաեւ, որ Թուրքիան իրականում շահագրգռված չէ այդ հարցով եւ մտադիր չէ սահմանը բացել: Ե՛վ Թուրքիան, ե՛ւ Մ. Նահանգները մեծապես շահեցին ստեղծված կեղծ տպավորությունից: Թուրքիային հաջողվեց նսեմացնել նախագահ Օբամայի տված խոստումը հայերին, իսկ Մ. Նահանգներին հաջողվեց ապահովել Թուրքիայի պատրաստակամությունը աջակցելու իր վարած քաղաքականությանը Աֆղանստանում, Իրաքում եւ արաբ-իսրայելական հակամարտությունում:

Հայաստանը, մյուս կողմից, ոչ մի շոշափելի արդյունքի չհասավ: Իրականում բանակցությունների առաջընթացի վերաբերյալ կրկնվող լավատեսական հայտարարությունները միայն օգնեցին բարելավելու Թուրքիայի եւ Մ. Նահանգների հեղինակությունն ամբողջ աշխարհում:

Բացի ոչինչ չշահելուց Հայաստանը վտանգի ենթարկեց իր ժողովրդի մի մասի նաեւ ամբողջ սփյուռքի պաշտպանությունը: Կառավարությունը կազմող չորս կուսակցություններից ՀՅԴ-ն դուրս եկավ կոալիցիայից: Նախագահ Օբաման էլ իր ապրիլքսանչորսյան ելույթում առիթից օգտվելով խուսափեց 1915-ի իրադարձությունները ցեղասպանություն որակելուց:

Այժմ պարզ է դարձել հայաստանյան կառավարությանը, որ Վաշինգտոնը ոչ մի մտադրություն էլ չուներ եւ չունի հաշտվելու մեր երկրում ժողովրդավարական բացթողումների հետ կամ միջոցներ շռայլելու մեր տնտեսական եւ քաղաքական խնդիրները լուծելու համար: Հայաստանի համար Օբամայի վարչակազմի առաջարկած արտասահմանյան օժանդակության գումարը 38 տոկոսով նվազ է անցյալ տարվա գումարից: «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի (ՀՄԿ) տրամադրած մեկ ուրիշ օժանդակություն մեկ երրորդով (67 միլիոն դոլար) պակասել է ստանձնած պարտավորությունները չկատարելու համար:

Վհատեցնող է, որ նման չափանիշներ պարտադրվում են Հայաստանին օտար երկրների կողմից: Ժողովրդի կենսամակարդակի բարելավումը մեր ազգաբնակչության շահերից է բխում, ուստի Հայաստանի կառավարության պարտականությունն է ամեն ջանք գործադրել այդ ուղղությամբ առանց արտաքին միջամտությունների: ՀՄԿ-ի օժանդակության կրճատման հետեւանքով ամենաշատը տուժելու են գյուղացիները, որոնք վերանորոգված ենթակառույցների կարիքն ունեն վաճառելու համար իրենց արտադրանքը:

Դեռեւս պարզ չէ, թե Հայաստանի ղեկավարները ինչ ուղիով են ընթանալու վերոնշյալ կրճատումների պարագաներում: Ձգտելո՞ւ են ՀՄԿ-ի պահանջները բավարարել, թե՞ վերջնականապես հրաժարվելու են այդ ծրագրից:

Հետագա զարգացումները կարող են չծրագրված հետեւանքներ ունենալ: Հայաստանի ղեկավարները կարող են եզրակացնել, որ Մ. Նահանգներին հաճոյանալով կամ բավականություն պատճառելով ո՛չ խուսափելու են քննադատություններից, ո՛չ էլ շոշափելի ակնկալիքներ են ձեռք բերելու: Այնպես որ նրանք կարող են պաշտոնապես հրաժարվել Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ կոմպլեմենտարության անվանական քաղաքականությունից եւ ավելի քան երբեւէ հենվել Ռուսաստանի եւ Իրանի վրա:

Ցավալի է, որ ՀՄԿ-ի որոշումը կայացավ դեսպան Յովանովիչի Մ. Նահանգներ կատարելիք այցի եւ հայկական համայնքների հետ հանդիպումների նախօրյակին: Ամերիկահայերը հավանաբար իրենց վրդովմունքը կհայտնեն նրան Մ. Նահանգների կիրառած երկակի չափանիշների վերաբերյալ, որ մի կողմից կրճատելով Հայաստանին հասկացվող օժանդակությունը, մյուս կողմից՝ ավելացնում է օժանդակությունը Ադրբեջանին, որն առանց այդ էլ հարուստ է նավթային պաշարներով: Նույնը վերաբերում է նաեւ Վրաստանին, որը չկատարելով ՀՄԿ-ի պարտավորությունները, շարունակում է ստանալ համապատասխան օժանդակություն նրանից:

**ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ**

**Թարգմ. Հ. Ծ.**

# Լուծել հայ ժողովրդի առջեւ ծառացած ծանրագույն այս խնդիրը

Վերջերս տարբեր թերթերում ցավով կարդացի Մայր աթոռի ներկայացուցչի հաստատումը, որ աղանդավորական քարոզչությունն արդեն իրականացվում է Սուրբ Էջմիածնում եւ եկեղեցիների բակերում: Կարծեմ, խոսքն այս անգամ ավետարանչական ընկերակցության քարոզչության մասին էր:

Սա արդեն անպատկառության գագաթնակետն է: Այդ անօրենները, հերիք չէ դռնեդուռ ընկած մեզ անհանգստացնում եւ իրենց քաղցրախոսությամբ շեղված գրականություն են պարտադրում, հիմա էլ աներեսաբար մեր ժողովրդին եկեղեցու դռան մոտ են ուզում որսալ: Որքան հանդուգն են դարձել այդ աղանդների ժպտերես քարոզիչները, որ չեն խորշում անգամ Սուրբ Էջմիածնի տարածքում իրենց սեւ գործը կատարելուց:

Սակայն առավել մեծ էր զարմանքս, երբ մի քանի օր անց կարդացի մեկ այլ հայտարարություն Ռենե Լեւոնյան դոկտոր վերապատվելիի ստորագրությամբ: Վերապատվելին ասում էր, թե ավետարանականները եւ ավետարանչական ընկերակցությունը որեւէ առնչություն չունեն այդ փաստերի հետ եւ «խստագույնս դատապարտում են ցանկացած գործողություն, որն ուղղված է Մայր եկեղեցու դեմ»:

Դժվարանում եմ հավատալ ասվածի անկեղծությանը: Վերապատվելի Լեւոնյան, եթե այդքան «բարի ցանկություններ» ունեք լուծելու հայ ժողովրդի առջեւ ծառացած ծանրագույն խնդիրները եւ դատապարտում եք Մայր եկեղեցու դեմ ուղղված գործողությունները, նախ ինքներդ դադարեցրեք ձեր իսկ դատապարտելի գործունեությունը Հայաստանում՝ այդպես լուծելով մեր ժողովրդի ոչ պակաս ծանր՝ հոգեւոր միասնության խնդիրը: Ձուր մի լցրեք աղանդավորների ջրաղացին եւ կեղծ հայտարարություններով մի փորձեք համոզել, թե երբեք այստեղ-այնտեղ թերթիկներ չեք բաժանել մարդկանց՝ հրավիրելով իրենց հարցերի պատասխանները գտնել ոչ թե Մայր եկեղեցում, այլ ձեզ մոտ՝ ավետարանականների եկեղեցում: Եվ մի փորձեք նման հայտարարություններով կամ այլ հնարքներով համոզել մարդկանց, թե ամենասերտ հարաբերությունների մեջ եք Հայ եկեղեցու հետ եւ ձեր սիրտը կատարվածի համար իսկապես ցավում է:

Հայ եկեղեցին Մայր կոչելուց առաջ փաստեք ձեր նվիրվածությունը իրական գործով: Այլապես անիմաստ ու անհասկանալի են դառնում ձեր բոլոր «բարի ցանկությունները»:

**ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ**



# Գայթակղությունների հին ու մնայուն արվեստը

Դեռեւս անցյալ տարվա նոյեմբերին ստորագրելով Մայնդորֆյան փաստաթուղթը, Ադրբեջանի ղեկավարությունը, փաստորեն, պատերազմի գաղափարաբանությունից հրաժարվելու համաձայնություն տվեց: Դրան, սակայն, վերապահումով պիտի վերաբերվել, որովհետեւ հարեւան երկրում հազիվ թե համակերպվել են ստատուս քվոյին եւ առաջին իսկ հնարավորությունը կօգտագործեն Լեռնային Ղարաբաղի վրա իրենց գերիշխանությունը վերահաստատելու համար: Ադրբեջանը չի կարող իր ուժերով լուծել այդ խնդիրը. ռազմական ճանապարհով Ղարաբաղին տիրանալու փորձը կարող է տեղի ունենալ միայն արտաքին դրդմամբ ու օժանդակությամբ: Իսկ դրա ուրվագծերը չեն նշմարվում:

Նոր արկածախնդրությունից խուսափելու մի պատճառաբանումն էլ, թերեւս, ադրբեջանցիների զգուշավորությունն է ղարաբաղցիների նկատմամբ, չէ՞ որ հերթական անգամ նրանք համոզվել են այդ փոքրիկ հողակտորի վրա ապրող ժողովրդի հերոսականության մեջ: Բացի այդ, Ադրբեջանի դիվանագիտության զինանոցում կա նաեւ խորհրդային ժամանակներից մնացած մի զենք՝ այսպես կոչված գայթակղելու արվեստը: Ճիշտ է, դա մեր օրերում հնացած միջոց է, բայց նրանք պատեհ առիթի դեպքում թերեւս փորձեն այն եւս գործի դնել:

Չէր խանգարի մի փոքրիկ էքսկուրս կատարել դեպի ԽՍՀՄ ժամանակներ:

Եթե խորհրդային ժամանակաշրջանը բաժանենք ըստ քաղաքականությունների մեթոդոլոգիայի, ապա առանձնանում են բաղիրովյան եւ ալիեւյան ժամանակահատվածները: Միր Ջաֆար Բաղիրովը փորձում էր ԼՂԻՄ-ի ժողովրդագրության պատկերը փոխել Բաքվում եւ արդյունաբերական այլ քաղաքներում ղարաբաղցիների համար բարձր վճարվող աշխատանքի շուկա ստեղծելու ձեւով: Եվ դա մասամբ հաջողություն ունեցավ: Անցյալ դարի 50-60-ական թվականներին՝ ի հետեւանք նույն այդ քաղաքականության, Ղարաբաղի հայերի մեծ արտահոսք եղավ: Կոմկուսակցական տարառիթ պատժամիջոցները պարբերաբար կիրառվում էին, բայց զուգահեռաբար արտահոսքի պատճառ էր բարեկեցիկ կյանքի պատրանքների սերմանումը: Ղարաբաղի հայ ազգաբնակչության տոկոսային հարաբերության նվազման պլանավորված գործընթացը, կարելի է ասել, սկսվել է Մ. Ջ. Բաղիրովի օրոք: Հետագայում նրա հետեւորդները պարզապես զարգացրել են մեթոդները:

Այսպես, Հեյդար Ալիեւը, ի տարբերություն Մ.Ջ.Բ-ի, ձեռնամուխ եղավ ԼՂԻՄ-ում արդյունաբերական ու կրթամշակութային էքսպանսիային: Ալիեւ ավագի «հայրական հոգատարությամբ» Ղարաբաղում սկսեցին կառուցվել նոր ձեռնարկություններ, երկաթուղին հասավ Ստեփանակերտ, բացվեցին կրթական նոր հաստատություններ եւ այլն: Մասնագետների դեֆիցիտը լրացնելու եւ այլ պատրվակներով սկսվեց ադրբեջանցիների հաշվենկատ ներհոսք հայկական ինքնավար մարզ: Բնական ճանապարհով անհնար էր կես դարում ազգաբնակչության համամասնությունը 3-4 տոկոսից հասցնել 24 տոկոսի (իսկ 1989 թվականի մարդահամարի տվյալներով, ադրբեջանցիները ԼՂԻՄ-ում շուրջ այդքան էին կազմում): Եթե չլիներ Արցախյան շարժումը եւ չփլուզվեր ԽՍՀՄ-ը, ապա 50 տարի հետո գուցե թե նրանք մեծամասնություն կազմեին Ղարաբաղում, եւ դեռեւս խորհրդային դարաշրջանի արշալույսից գոյություն ունեցող հիմնախնդիրը ինքնաբերաբար լուծված կլիներ:

Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացված հետագա քաղաքականությունը այլ բնութագրություն ունի: Թե՛ պատերազմին նախորդող շրջանը, թե՛ պատերազմական հատվածը բնութագրվում են արտաքին ազդեցություններով: Անվիճելի է, մասնավորապես, որ հարավկովկասյան պետություններում հակամարտությունների ծագումնաբանության մեջ ակնհայտ է ռուսական ներկայությունը: Եթե Վրաստանում հետխորհրդային Ռուսաստանը պարզապես ստանձնել է նորաստեղծ պետական կազմավորումների անվտանգության երաշխավորությունը, ապա Ղարաբաղում դա վերապահել է Հայաստանին՝ երեւի վստահաբար իմանալով, որ Ադրբեջանն ի վիճակի չէ գրավելու անառիկ Ղարաբաղը: Այս համատեքստում նկատելի է հայերի զինական բարձր հնարավորությունների մասին ՌԴ օբյեկտիվ գնահատանքը:

Ինչո՞ւ 1990-ականների սկզբներին Ադրբեջանն ընտրեց ռազմական ճանապարհը: Հակամարտության սրման հատկապես սկզբնամասում ԽՍՀՄ զորախմբերի մասնակցությունը հայ ինքնապաշտպանների դեմ ռազմագործողություններին, ինչը բազմիցս փաստվել է վավերագրություններով, պարզ վկայում է Ադրբեջանին ցուցաբերված աջակցության մասին: Հասկանալի էր նաեւ նպատակը՝ ղարաբաղա-ադրբեջանական առճակատմանը տալ սպառնալից բնույթ, բնականաբար, գործընթացների վերահսկողությունը Մոսկվային վերապահելով: Իզուր չէր Հեյդար Ալիեւն ասում, որ ղարաբաղյան կարգավորման բանալին գտնվում է Կրեմլում:

Ալիեւ կրտսերն ըստ էության ոչինչ չի փոխել հոր վարած քաղաքականության մեջ: Նա անընդհատ խուսանավում է՝ Արեւմուտք-Ռուսաստան հարաբերություններում շահեկան ելքեր գտնելու նպատակադրությամբ: Որոշ վերլուծաբաններ նշում են, եւ դրան կարելի է համաձայնել, որ նա տարբերակ առ տարբերակ իրականացնում է հոր պատեհապաշտ ծրագրերը՝ սպասելով իր աստեղային ժամին:

Այդուհանդերձ, ադրբեջանցիների մեջ մնայուն է հոգեբանական բարդույթը, որն ուղղակի արտացոլում է նրանց զգուշավորության իրական պատճառը: Ուշագրավ է, որ հարեւան հանրապետությունում մայրերն այժմ իրենց չարություն անող երեխաներին սաստում են հայի սարսափելի կերպարով, մինչդեռ տասնամյակներ առաջ հայերն էին թուրքի կերպարով վախեցնում իրենց երեխաներին:

Կարգավորման ոչ մի սկզբունք, լինի մադրիդյան, թե այլ, ունակ չէ վերջնական լուծում ապահովելու: Հակամարտությունը լուծվել կարող է միայն ԼՂՀ-Ադրբեջան փոխվստահելի հարաբերություններ ստեղծվելուց հետո: Իսկ այդ պարագայում, ենթադրվում է, Ադրբեջանը նորացված ձեւերով կիրարկման կդնի գայթակղությունների հին արվեստը:

Բնավ էլ հարեւան ազգին թերագնահատելու մղումը չէ նման տպավորությունների շարժառիթը: Տարածաշրջանում զարգացումները անկանխատեսելի են ընթանում, եւ չպիտի բացառել նույնիսկ աբսուրդները: Իհարկե, նաեւ պատրաստ լինել դիմադարձելու դրանց:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

**Ստեփանակերտ**

AZG NEW 5.QXD 6/18/2009 9:27 PM Page 1



# «Ոչ մի պատրանք չպետք է ունենալ. սա հեղափոխություն չէ»

## *Իրանի հյուսիսում հզորանում են պանթյուրքիստական տրամադրությունները*

Իրանում այսօր տեղի կունենա մեծ նամազը, որ կառաջնորդի Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին: Իրանի իշխանությունները հույս ունեն, որ հոգեւոր առաջնորդի կոչով ընդդիմությունը կդադարեցնի ցույցերը կամ կգա որեւէ ընդհանուր հայտարարի: Այսպիսին է հարեւան Իրանում ներկա վիճակի ներկայացումը ըստ ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Գառնիկ Ասատրյանի, որը երեկ հյուրընկալվել էր Մամուլի ազգային ակումբում «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում:

Իրանի նորագույն պատմության 10-րդ ընտրություններին չորս թեկնածու էր մասնակցում, բոլորը՝ իսլամական հեղափոխության գործիչներ: Ու չնայած առաջին եւ երկրորդ տեղը զբաղեցրած թեկնածուների ձայների տարբերությունը կրկնակի է, բայց դեռեւս հասարակությունը մտավորականության զգալի ներկայացուցիչների հետ մեկտեղ նոր ընտրություններ կամ արդյունքների վերանայում է պահանջում:

Գառնիկ Ասատրյանի դիտարկումներով, Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի օրոք իրավիճակն ավելի չի վատթարացել, ինչպես ընդունված է գնահատել դրսից: Ու «ժողովրդի ծոցից» ելած համարվող նախագահի նախագահության ընթացքում կայունացել են տնտեսական ցուցանիշները, զարկ է տրվել գյուղատնտեսության զարգացմանը եւ այլն:

Այս ամենով հանդերձ, ըստ Ասատրյանի, Ահմադինեժադը մի շարք բացասական գծեր ունի, այդ թվում՝ հակվածություն կտրուկ քայլերի, կրոնական միագիծ մոտեցում, անհանդուրժողականություն, ազգային չափանիշների հիպոտրոֆիա: Բայց թերեւս ամենաթույլ կողմը Ահմադինեժադի կառավարությունն է, կադրերը, որ, իրանագիտության ամբիոնի ղեկավարի մատուցմամբ, աչքի չեն ընկնում պրոֆեսիոնալությամբ:

Գառնիկ Ասատրյանի խոսքերով, այս ընտրություններում առաջին անգամ Իրանի էթնիկ միավորները օգտագործվեցին որպես մեքենայությունների առարկա, առատորեն բաժանվեցին խոստումներ ստեղծելու կրոնական փոքրամասնությունների համար դպրոցներ, զարգացնելու տեղական լեզուները, այդ լեզուներով գրականություն հրատարակել:

Մինչդեռ, ըստ մասնագետի, եթե այդ խոստումները պահվեն ու իրականացվեն, դրանով կսկսվի Իրանի մասնատման գործընթացը:

Բայց կա մեկ այլ ֆենոմեն. Իրանը չի կարելի համարել բազմազգ պետություն, այն 3000 տարի անեքսիայի եւ նման այլ երեւույթների չի ենթարկվել, մինչեւ իսլամի տարածումը որեւէ էթնիկ փոքրամասնություն չի եղել այս պետության տարածքում, ուստի եւ չեն կարող լինել որեւէ տարածքային պահանջներ:

Ասատրյանի ներկայացմամբ, սխալ են նաեւ Իրանի համեմատությունները Հնդկաստանի կամ Խորհրդային Միության հետ, Իրանում չկա նաեւ ադրբեջանական փոքրամասնություն, այլ երկրի հյուսիսում երկլեզու իրանցիներ են, որոնց ադրբեջանցի ասելն անհեթեթություն է: Բայց այս ամենը չի նշանակում, թե Ատրպատականը չի կարող դառնալ պանթյուրքիզմի կենտրոն՝ թեկուզ հակաիրանական, պանթյուրքիստական նյութերի տարածման պատճառով՝ ԱՄՆ-ի, Ադրբեջանի ու Թուրքիայի հեռուստաալիքների միջոցով:

Առավել հետաքրքրական է, որ Իրանում կառավարման միջին օղակի ղեկավարների մեջ դիտելի է հակաիրանական կամ թյուրքիստական տարրերի օրըստօրե հզորացում, պահանջով, որ Իրան-Հայաստան եւ Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջնահերթությունը տրվի երկրորդին:

Ամեն դեպքում, Իրանում ներկայումս տեղի ունեցող երեւույթները, Գառնիկ Ասատրյանի գնահատմամբ, գունավոր հեղափոխություն չեն, գոնե այս պահին, քանի որ չեն առաջնորդվում դրսից: Տեղի ունեցողը նաեւ դեռեւս համակարգային փոփոխության արտահայտություն չէ: «Ոչ մի պատրանք չպետք է ունենալ, սա հեղափոխություն չէ», վստահեցրեց Գառնիկ Ասատրյանը, ավելացնելով, որ Իրանի համար իսլամական վարչակարգին այլընտրանք չկա, բացի Իրանի մասնատումից:

Դրսից Իրանում տեղի ունեցողը օգտագործելու հավանականության առումով Ասատրյանը գտնում է, որ Արեւմուտքը ընդհանրապես այս գործընթացի սկզբում չեզոք դիրքորոշում ուներ, աստիճանաբար տոնայնությունը փոխվում է, շեշտադրվում է էթնիկական բնույթը, որ ավելի ու ավելի ընդգծվում է հեռուստաալիքների ներկայացրած նյութերով:

Հայաստանի հանդեպ Իրանի քաղաքականությունն էլ, ըստ Ասատրյանի, չի փոխվի, ով էլ համարվի ընտրված նախագահ, բացառությամբ թերեւս Մոհսեն Ռեզայի, որը նախընտրական փուլում Թավրիզի հանդիպումներից մեկում հայտարարել է. «Եթե արժանապատվություն ունենային իրանցիները, հայերը չէին գրավի Ղարաբաղը»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Իրանում անկարգությունների կազմակերպիչները ենթակա են մահապատժի

Սպահանի նահանգի դատախազը հայտարարել է, որ հունիսի 12-ի նախագահական ընտրություններին հաջորդած անկարգությունների կազմակերպիչները ենթակա են մահապատժի իսլամական պետության օրենքներին համապատասխան: Դատախազ Մոհամմադրեզա Հաբիբիի խոսքերը մեջբերում է Ռոյթեր գործակալությունը:

Պաշտոնյան ասել է, որ անկարգությունների կազմակերպիչներին ղեկավարում են արտերկրից, եւ նրանց կոչ է արել դադարեցնել «հանցավոր գործունեությունը»: Դատախազի խոսքերով, այդ անձինք պետք է «վերադառնան պետության գիրկը», մինչեւ որ դատվեն օրենքի ամբողջ խստությամբ:

Երբ հունիսի 12-ի ընտրություններից հետո հաղթող հայտարարվեց գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադը, նրա ախոյան Միր Հոսեյն Մուսավիի կողմնակիցները հայտարարեցին, թե ընտրությունների արդյունքները կեղծված են: Սկսվեցին բողոքի բազմամարդ ելույթներ, ցույցեր, եղան ոստիկանների եւ ցուցարարների բախումներ Թեհրանում եւ ուրիշ երկրներում:

Հունիսի 16-ին Իսլամական հեղափոխության պահապանների խորհուրդը համաձայնեց քվեների վերահաշվարկ կատարել այն տեղամասերում, որտեղ ընդդիմության ներկայացուցիչներն արձանագրել էին ընտրախախտումներ: Ինքը՝ Մուսավին, պահանջում է անցկացնել նախագահական նոր ընտրություններ:

# Էշերի հասին 18 հազար 200 դոլար վճարող Ադրբեջանը 5 հազար դոլարով վերջին մոդել լյուքս ջիպեր է ներմուծում

Հունիսի 9-ին թուրքական մամուլը, հիմք ընդունելով Ադրբեջանի վիճակագրության ինստիտուտի տվյալները եւ ադրբեջանական «Ենի Մուսաֆաթ» թերթի հրապարակումները, տեղեկացրել էր, որ պաշտոնական Բաքուն պետբյուջեից 170 հազար դոլար է հատկացնում, որ էշեր ներմուծի տարբեր երկրներից: Էշերի առաջին գլխաքանակը 2006-ին ներմուծվել էր Գերմանիայից՝ վճարելով յուրաքանչյուրի դիմաց ավելի քան 10 հազար դոլար: Իսկ անցյալ տարի Ադրբեջանը պետական կարիքների համար եղբայրական Թուրքիայից հասը 18 հազար 200 դոլարով 15 էշ էր գնել:

Թվում էր, թե հարգի է «մեծ եղբոր» ամեն ինչը, էշը նմանապես, եթե Ադրբեջանում չբացահայտվեր վերջին մոդելի լյուքս ջիպերի ներմուծման հետ կապված սկանդալը: Պարզվում է, Թուրքիայից հասը 18 հազար 200 դոլարով էշ ներմուծող խմբավորումը 2003-ից ի վեր պետական գործիչների համար վերջին մոդելի լյուքս ջիպեր է ներմուծում, ընդ որում՝ ձեւակերպելով այդ ջիպերից յուրաքանչյուրի արժեքն ընդամենը 5 հազար ԱՄՆ դոլար:

Հունիսի 15-ին այդ մասին տեղեկացրել է թուրքական «Ենի Շաֆաք» թերթը, վկայակոչելով ադրբեջանական «Ենի Մուսաֆաթի» հունիսի 14-ի համարը, որն իր հերթին հենվել է մաքսային պետական կոմիտեի օրերս հրապարակած տվյալների վրա: «Ենի Մուսաֆաթը», նկատի առնելով, որ օրինազանց այդ խմբավորումը 2007-2008 թթ. մաքսանենգ ճանապարհով 10 մլրդ դոլար է վաստակել, որպես «գողություն» եւ «պետբյուջեի կողոպուտ» է որակել լյուքս ջիպերի ինքնարժեքից, առավել եւս իշուց, անհամեմատ ցածր գնով ներմուծումն Ադրբեջան: Որքան էլ առաջին հայացքից արդարացի թվա թերթի որակումը, չպետք է մոռանալ արժեքավորման համակարգի գոյության մասին: Եթե հասը 5 հազար դոլարով լյուքս ջիպեր ներմուծող ադրբեջանական պետությունը պետբյուջեի հաշվին իշու դիմաց 18 հազար 200 դոլար է վճարում, նշանակում է ադրբեջանական ժողովուրդը գնահատում է իշուն, իսկ Բաքվի վարչակարգը՝ պետական այրերին, կամ էլ իշու տեղ են դնում այդ ժողովրդին: Մինչդեռ ադրբեջանական ժողովուրդը Բուդապեշտում հայ սպային սպանելու համար ազգային հերոս էր հռչակել մարդասպան տականին:

Հ. ՉԱՔՐՅԱՆ



# Բրայսի եւ Թոյնբիի գիրքը անգլերեն՝ Լոնդոնում եւ Անկարայում

**Լոնդոնում տեղակայված «Կոմիտաս» ինստիտուտը խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությամբ տեղեկացնում է, որ հաջորդ շաբաթվա ընթացքում Լոնդոնում եւ Անկարայում միաժամանակ լույս կտեսնի Ջեյմս Բրայսի եւ Առնոլդ Թոյնբիի համահեղինակած «Հայերի հանդեպ վերաբերմունքը Օսմանյան կայսրությունում-1915-1916 թթ.: Դերկոմս Բրայսի ներկայացրած փաստաթղթերը Ֆալլոդոնի դերկոմս Գրեյին» (Osmanli Imparatorluu´nda Ermenilere Yapilan Muamete, 1915-1916: Vikont Bryce´in Fallodon Vikontu Grey´e Sunduu Belgeler SansՖrsՖz Basim) չգրաքննված հատորի անգլերեն հեղինակազորված թարգմանությունը:**

**Հատորը, ըստ հաղորդագրության, բաղկացած է 654 էջերից: Խմբագիրն է Արա Սարաֆյանը: Առաջաբանը գրել է լորդ Էյվբերին: Հետաքրքրական է, որ թուրք խորհրդարանականները 2005-ին գիրքը «քարոզչական հրատարակություն» որակելով, խնդրագիր են ներկայացրել բրիտանացի խորհրդարանականներին, հավանաբար չտպագրելու անգլերեն թարգմանությունը, բայց քննարկումներից հետո բրիտանացի խորհրդարանականները 2006-ին մերժել են խնդրագիրը, հրավիրելով իրենց թուրք գործընկերներին միասին խորհրդածելու: Թուրքերը չեն ներկայացել, հրաժարվել են հանդիպումից:**

**Հավելյալ տեղեկությունների համար այցելել bluebook@gomidas.org կայքը:**

Հ. Ծ.

# Հիլարի Քլինթոնը կոտրել է իր արմունկը

**ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը ընկել է եւ արմնկահոդի վնասվածք ստացել: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչության հայտարարությունը:**

**Հ. Քլինթոնը աջ արմունկի վնասվածքն ստացել է, երբ շտապում էր հասնել Սպիտակ տուն: Նրան տարել են «Ջորջ Վաշինգտոն» համալսարանի հիվանդանոց, որտեղ բժիշկները ցույց են տվել առաջին օգնություն եւ ուղարկել են տուն: Սպասվում է, որ առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում նրան կվիրահատեն:**

**Միջադեպի պատճառով պետքարտուղարի աշխատանքային ժամակարգը փոփոխվել է: Պետդեպարտամենտի մամլո ծառայությունում նշել են, որ նա «շտապում է վերսկսել աշխատանքը»:**

**Ֆրանսպրեսը մանրամասնում է, որ չորեքշաբթի օրը բավական լարված էր եղել Հ. Քլինթոնի համար, որը բանակցել էր Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանի հետ, ինչպես նաեւ հնդիկ գործարարների առջեւ ելույթ էր ունեցել «ԱՄՆ-Հնդկաստան» կոնֆերանսում:**

# Բրիտանացի նախարարը հրաժարական տվեց հարկ չվճարելու կասկածների պատճառով

**Մեծ Բրիտանիայի գանձապետարանի նախարար Քիթթի Աշերը պաշտոնը թողնելու որոշում է ընդունել հրապարակված այն կասկածների կապակցությամբ, թե ինքը խուսափում է հարկեր վճարելուց: Այդ մասին հաղորդում է BBC-ի կայքէջը:**



**Մամուլում կասկածներ են արտահայտվել, թե Աշերը 2007-ին իր երկրորդ տունը հայտագրել է որպես հիմնական կացարան, ապա վաճառել՝ խուսափելով անշարժ կայքի վաճառքի դիմաց հարկ վճարելուց: Նախարարը հայտարարել է, որ ինքը որեւէ դատապարտելի բան չի արել, բայց հրաժարական է տալիս կառավարության վարկը չգցելու համար:**

**Հրաժարական տալուց առաջ Աշերը խորհրդակցել էր ֆինանսների նախարար Ալիստեր Դառլինգի եւ վարչապետ Գորդոն Բրաունի հետ:**

**Քեթթի Աշերի հրաժարականից հետո նրա պաշտոնում նշանակվել է տեղական ինքնակառավարման գործերի Սառա Մակքարտի Ֆրայը:**

**Աշերը նաեւ հրաժարվել է մասնակցել 2010-ի խորհրդարանական ընտրություններին, դա բացատրելով ընտանեկան հանգամանքներով: Նա ունի երկու փոքր երեխա:**

**Երեկ Մեծ Բրիտանիայի խորհրդարանի կայքէջում հրապարակվել են տվյալներ պատգամավորների ծախսերի վերաբերյալ: Ավելի վաղ Համայնների պալատի մի քանի լեյբորիստ պատգամավորների կասկածել էին հարկային մեքենայությունների մեջ:**

**Հունիսի սկզբներին Գորդոն Բրաունի կառավարությունից արդեն հեռացել էր մի քանի նախարար, խիստ թուլացնելով վարչապետի դիրքերը: Այդ պաշտոնաթողությունները կապված էին զանազան սկանդալների հետ, որոնք զգալիորեն իջեցրին կառավարող Լեյբորիստական կուսակցության վարկանիշը: Պահպանողական կուսակցության առաջնորդ Դեւիդ Կեմերոնը քանիցս Բրաունին հորդորել է անցկացնել վաղաժամկետ ընտրություններ:**

# Թուրքիան նոր ուղղաթիռներ է ձեռք բերում

**RIA Novosti-ի ռազմական մեկնաբան Իլյա Կրամնիկը Մոսկվայից տեղեկացնում է, որ թուրք ռազմական մի պատվիրակություն Ռուսաստան է ժամանել քննարկելու Mi-28 հարձակողական ուղղաթիռներ ձեռք բերելու հնարավորությունը: Սա առաջին անգամը չէ, որ երկու երկրները համագործակցում են ռազմական բնագավառներում:**

**1970 եւ 1980-ական թվերին Թուրքիան Ամերիկայից գնել էր 32 օգտագործված AH-1 P/S «Կոբրա» հարձակողական ուղղաթիռներ, որոնց հետագայում AH-1 F-ի մակարդակի էին հասցրել պահեստամասերը վերափոխելու միջոցով: Թուրքական բանակը դեռեւս ունի 23 AH-1 P/S «Կոբրաներ», սակայն 1990-ականներից իշխանությունները մտածում են դրանք նորերով փոխարինելու մասին: Պատվիրակությունը, ըստ Կրամնիկի, կարող է «Գիշերորսիչներ» հորջորջված 12-32 Mi-28 ուղղաթիռներ գնել Ռուսաստանից, փոխանակ ավելի վաղ առաջարկված Mi-24 «Կոկորդիլոս» տիպի ուղղաթիռների: Ներկայումս Թուրքիայում բանակն ու ոստիկանությունը օգտագործում են Mi-17 ուղղաթիռները, Mi-28-ները չափազանց «ճկուն ու դիմացկուն» են որակել մասնագետները: Թուրքիան ներկայումս այդ ուղղաթիռների կարիքն ունի՝ պայքարելու համար քրդական բանակայինների դեմ:**

**Մյուս կողմից անգլո-իտալական AgustaWestland ընկերության հետ կնքած պայմանագրով Թուրքիան մինչեւ 2015 թվականը ձեռք կբերի 50 T-129 կոբրայատիպ ուղղաթիռներ:**

MELG.QXD 6/18/2009 9:26 PM Page 1



# Հայ լեզուն ու ժառանգությունը վտանգի մեջ են

## Եթե դպրոցներ գոյություն չունենան, Սփյուռքի համայնքները կկանգնեն անհետացման վտանգի առաջ

## ՄԻԱՑԵ՛Ք ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔԻՆ՝

### ՓՐԿԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱԲԱՑԵԼՈՒ ՄԵԼԳՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ լեզուն, մշակույթը եւ պատմությունը անհետացման անմիջական վտանգի կենթարկվեն, եթե միջոցներ չձեռնարկվեն ապահովելու Սփյուռքի հայ համայնքների վերապրումը եւ զարգացումը աշխարհի տարբեր տարածքներում:

Հայաստանի երիտասարդ Հանրապետությանը պետք է զորավոր Սփյուռք, առանց որի նա չի կարող գոյատեւել:

Ներկա եւ ապագա հայ սերունդների ազգային ինքնությունը պահելու միակ միջոցը դպրոցների գոյությունն է, որտեղ հայ աղջիկներն ու տղաները կգիտակցեն իրենց մարդկային իրավունքներն ու կդաստիարակվեն՝ ապահովելու համար իրենց համայնքների գոյերթը եւ զարգացումը:

Այսպիսի կրթարան է Կիպրոսի Մելգոնյան հաստատությունը, որն անարդարացի կերպով փակվեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) Կենտրոնական Վարչության կողմից: Եվ Եվրոպայի, Միջին Արեւելքի եւ աշխարհի զանազան վայրերից ներկա եւ ապագա հայ սերունդները զրկվեցին իրենց սեփական լեզվով իրենց ժառանգությունը ճանաչելու մարդկային արդար իրավունքից:

Միացեք համաշխարհային այս ստորագրահավաքին՝ դիմելու Կիպրոսի Հանրապետության կառավարությանը, որ համոզի ՀԲԸՄ.ի Կենտրոնական Վարչությանը, որպեսզի վերջինս համաձայնի վերաբացել պատմական Մելգոնյան կրթական հաստատությունը նոր տեսքով՝ գալիք սերունդների համար, իր ներկա վայրում՝ Նիկոսիայում:



## ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ՝

### ՎԵՐԱԲԱՑԵԼՈՒ ՄԵԼԳՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԻԿՈՍԻԱՅՈՒՄ ԿԻՊՐՈՍ

Մենք՝ ստորագրահավաքի մասնակիցներս, առարկում ենք Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության փակմանը եւ փափագում ենք այն տեսնել վերաբացված իր ներկա տարածքի վրա, իբրեւ ուսման երկրորդական մակարդակի կրթարան՝ ծառայելու Եվրոպական Միության եւ շրջակա վայրերի բոլոր հայերին:

Մենք գիտակցում ենք այն կենսական դերը, որ ուներ հաստատությունը անցնող 80 տարիներին՝ պահպանելով ու զարգացնելով հայ լեզուն, մշակույթը եւ պատմությունը, ամենուրեք պաշտպանելով հայ ինքնությունը:

Իբրեւ միակ հաստատությունն իր տեսակի մեջ, որը հայ ուսանողներին ապահովում է իրենց ուրույն ժառանգության վրա խարսխված կրթությամբ եւ օրենքով պաշտպանված սեփական լեզվով, մենք խնդրում ենք, որ միջոցներ ձեռնարկվեն՝ ապահովելու նրա պահպանումը:

Խնդրում ենք, որ հաստատության հիմնադիր ու բարերար Կարապետ Մելգոնյանի ձգտումները հարգվեն: Խնդրում ենք նաեւ, որ այս տարածքը մնա պատմամշակութային ազգային ժառանգության վայր՝ ինչպես հայտարարված է Կիպրոսի Հանրապետության անձեռնմխելիության հրամանագրով:

Խնդրում ենք, որ պաշտպանեք աշխարհասփյուռ հայերի մշակույթն ու ինքնությունը՝ երաշխավորելով, որ վերաբացվի կրթության այս մեծ կենտրոնը եւ հնարավորություն տրվի, որ այն ծաղկի ու բարգավաճի եւ իրենով ամենուրեք բարգավաճեն հայորդիների ապագա սերունդները:

Մելգոնյան կրթական հաստատությունը հիմնվեց 1926 թվականին, հյուրընկալ Կիպրոսում՝ որպես որբանոց, ապաստան դառնալով Ցեղասպանության հարյուրավոր վերապրողների համար: Այս գիտակցությամբ պատմական շենքերը անձեռնմխելի են հայտարարվել Կիպրոսի Հանրապետության կողմից՝ իբրեւ Կղզու ազգային ժառանգության մի մաս:

Որբերի կողմից տնկված ծառերը ներկայացնում են սփյուռքի բարգավաճող հայկական համայնքները: Այս պատճառով է, որ Հաստատությունը Կիպրոսի Հանրապետության կողմից պահպանվում է որպես «պաշտպանյալ» պատմական վայր՝ իբրեւ խորհրդանիշ վերապրումի եւ հույսի:

Հազարավոր հայեր, ովքեր ավարտեցին Մելգոնյանը, ուշագրավ դիրքեր գրավեցին իրենց համայնքներում՝ իրենց ասպարեզներում դառնալով առաջնորդներ եւ սատարելով հայ մշակույթին, կրթությանը, լեզվին ու ազգային ինքնության զարգացմանը:

Մելգոնյանի շրջանավարտներն իրենց դրոշմը ձգեցին ամենուրեք՝ լինելով առաջնորդող դեմքեր գրականության, արվեստի, գիտության եւ առեւտրի ասպարեզներում:

Մելգոնյան հաստատությունը ավարտել են հազարավոր ուսանողներ եւ ուսուցիչներ, ովքեր իբրեւ Բարի կամքի դեսպաններ՝ պաշտպանում են Կիպրոսի ժողովրդի արդար պայքարը, որպեսզի իրավացի լուծում ստանա Կղզու հարցը:

**ՄԻԱՑԵՔ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔԻՆ՝**

**ՓՐԿԵԼՈՒ, ՎԵՐԱԲԱՑԵԼՈՒ ՄԵԼԳՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

**ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔԻ ԿԱՅՔԷՋԸ՝ www.midk.org**

# Առաֆել Միրզոյանի ցավալի վրիպումը

Ծանրամարտի հայ սիրահարները անհամբերությամբ էին սպասում Բուխարեստում ընթացող աշխարհի երիտասարդական առաջնությունում Առաֆել Միրզոյանի ելույթին՝ նրանից ակնկալելով մեդալ: Եվ այդ սպասելիքները արդարացված էին, քանի որ Առաֆելը Եվրոպայի մեծահասակների առաջնությունում մինչեւ 69 կգ քաշային կարգում նվաճել էր չեմպիոնի տիտղոսը:



Եվ պետք է նշել, որ Բուխարեստում ամեն ինչ սկզբում գերազանց էր ընթանում: Պոկում վարժությունում 20-ամյա Առաֆելը վստահ ելույթ ունեցավ: Նա արդյունավետ օգտագործեց բոլոր երեք փորձերն էլ՝ հաջորդաբար բարձրացնելով 145, 150 եւ 152 կգ-անոց ծանրաձողերը: Միրզոյանն այդ վարժությունում ոսկե մեդալ նվաճեց: Նա 5 կգ-ով առաջ անցավ չին ծանրորդ Լին Ցինֆենից: Փոքր բրոնզե մեդալը նվաճեց թայլանդցի Փայսան Հանսավոնը, որը ցույց տվեց 145 կգ արդյունք:

Թվում էր, թե Առաֆելի համար ոչ մի խոչընդոտ չի լինի աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար: Նա վստահ էր իր ուժերին, ուստի հրում վարժության համար պատվիրել էր 19 մասնակիցների մեջ ամենաբարձր քաշը՝ 180 կգ: Առաֆելն իր ելույթը սկսեց այն ժամանակ, երբ մյուս մասնակիցներն արդեն ավարտել էին ելույթները: Լավագույն արդյունքը ցույց էր տվել թայլանդցի Հանսավոնը՝ 175 կգ: Չին ծանրորդ Լին Ցինֆենը անհաջող փորձ էր կատարել բարձրացնելու 180 կգ-ը՝ բավարարվելով 173 կգ-ով: Այնպես որ, եթե Առաֆելը առաջին մոտեցմամբ բարձրացներ 180 կգ-ը, ապա կնվաճեր աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ցավոք ոչ առաջին, ոչ երկրորդ ու երրորդ մոտեցումների ժամանակ հայ ծանրորդը չկարողացավ «սանձել» ծանրաձողը եւ 0 ստանալով, զրկվեց մրցանակակիր դառնալու հիանալի հնարավորությունից: Ինչ խոսք, այդ անհաջողությունում մեղքի իրենց բաժինն ունեն նաեւ մարզիչները, որոնք մրցակիցներին զիջեցին տակտիկական պայքարում եւ գերագնահատելով Առաֆելի ուժերը, միանգամից բարձր քաշ էին պատվիրել: Իհարկե, շատ ցավալի է, որ Առաֆել Միրզոյանը ձեռքից բաց թողեց չեմպիոն դառնալու հիանալի հնարավորությունը: Մնում է չհուսահատվել ու դասեր քաղել այս անհաջողությունից եւ առաջիկա մրցումներում հաջող հանդես գալ:

Մինչեւ 69 կգ քաշային կարգի աշխարհի չեմպիոն հռչակվեց չին ծանրորդ Լին Ցինֆենը՝ 320 կգ (147+173): Նա միայն անձնական ավելի թեթեւ քաշի (ընդամենը 360 գրամով) շնորհիվ գերազանցեց արծաթե մեդալակիր, թայլանդցի Փայսան Հանսավոնին: Բրոնզե մեդալը բաժին հասավ ռումինացի Ռազվան Մարտինին՝ 313 կգ (143+170) :

Կանանց մինչեւ 58 կգ քաշայինների մրցավեճում հաղթող դարձավ չին մարզուհի Դեն Մենժոնը՝ 218 կգ (98+120): Երկրորդ տեղը գրավեց ռումինացի Ռոքսանա Կոկոշը՝ 208 (91+117): Բրոնզե մեդալակիր դարձավ թայլանդցի Պատամա Կունտավին՝ 199 կգ (84+115):

# «Միկան» ռեւանշի հասավ

Առաջնության 11-րդ տուրից հետաձգված «Բանանց»-«Միկա» հանդիպումը մեծ հետաքրքրությամբ էր սպասվում: «Բանանցը» միակ թիմն էր, որ առաջնությունում պարտության էր մատնել «Միկային», բացի այդ էլ գավաթի մրցաշարի կիսաեզրափակիչում փակել էր թիմի ճանապարհը եզրափակիչ: Ուստի կարելի է ենթադրել, որ «Միկայի» ֆուտբոլիստները «Բանանցի» նկատմամբ ռեւանշի հասնելու վճռականությամբ էին խաղադաշտ մտել:



Հանդիպումը հատկանշական էր նաեւ այն առումով, որ Հայաստանի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ (մինչ այդ նման բան տեղի էր ունեցել գավաթի մրցաշարում) սպասարկում էր արտերկրից հրավիրված մրցավարական բրիգադը: Ընդ որում իտալացի Լուկա Բանտիին եւ նրա գործընկերներին Հայաստան էր հրավիրել «Միկա» ակումբը՝ հոգալով նրանց ծախսերը: Ֆուտբոլասերներին հիշեցնենք, որ վերջերս կայացած մամուլի ասուլիսում ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը «Արարատի» ղեկավարությանը կոչ էր արել սեփական ծախսերով մրցավար հրավիրել ցանկացած երկրից: Հետաքրքրական է, թե «Փյունիկի» հետ 14-րդ տուրում կայանալիք վճռորոշ խաղում էլ «Միկան» դրսից կհրավիրի՞ մրցավար, թե՞ ոչ:

Ինչ վերաբերում է հանդիպմանը, ապա այն անցավ անհարթ մրցակցությունում: Խաղասկիզբը շատ խոստումնալից էր: Արդեն 7-րդ րոպեին «Միկայի» ռմբարկու Բոտի Դեմելը շեշտակի հարվածով գրավեց «Բանանցի» դարպասը՝ խփելով առաջնությունում 9-րդ գնդակը: Սակայն դեռ չէին հասցրել «Միկայի» ֆուտբոլիստները կիսել խփած գոլի բերկրանքը, երբ հաջորդ իսկ գրոհի ժամանակ Արտակ Օսեյանը վերականգնեց հավասարակշռությունը: Առաջին խաղակեսում «Միկան» երկու անգամ մոտ էր հաջողությանը, սակայն Բոտի Դեմելը նպաստավոր պահերը չօգտագործեց: Իսկ ահա ընդմիջումից քիչ անց նպատակին հասավ «Միկայի» իսպանացի ֆուտբոլիստ Ուլիսես Մոնտենեգրոյի հարվածը: Ինչպես պարզվեց հետագայում, այդ գոլը հաղթական էր, քանի որ հաշիվը հավասարեցնելու «Բանանցի» բոլոր ջանքերն ապարդյուն անցան:

Այսպիսով, հաղթելով 2-1 հաշվով, «Միկան» վաստակեց 29 միավոր եւ հավասարվեց առաջատար «Փյունիկին»: Ճիշտ է, «Փյունիկը» մեկ խաղ պակաս է անցկացրել: 11-րդ տուրից «Արարատի» հետ հետաձգված հանդիպումը կկայանա հուլիսի 7-ին:

# Իսպանացիները վճռեցին ուղեգրի հարցը

Հարավային Աֆրիկայում ընթացող ֆուտբոլի կոնֆեդերացիաների գավաթի մրցաշարում Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի հավաքականը 2-րդ հաղթանակը տոնեց: Իրաքի հավաքականի հետ խաղում իսպանացիներին հաղթանակ պարգեւեց Դավիթ Վիյայի խփած միակ գոլը: Այս հաղթանակի շնորհիվ իսպանացիները գործնականում լուծեցին կիսաեզրափակիչ դուրս գալու հարցը:

Խմբի մյուս խաղում ՀԱՀ-ի հավաքականը 2-0 հաշվով պարտության մատնեց Նոր Զելանդիայի ընտրանուն: Հանդիպման հերոսը Պարկերն էր, որի խփած 2 գոլերը հաղթանակ պարգեւեց հարավաֆրիկացիներին: Նրանք ունեն 4 միավոր: Խմբային մրցաշարի ավարտական տուրում ՀԱՀ-ի հավաքականը մրցելու է իսպանացիների հետ:

# Պատմությունը կրկնվեց

Ինչպես եւ նախորդ տուրում, Ռումինիայում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրի հանդիպումներն էլ ոչ-ոքի ավարտ ունեցան: Մրցակարգի համաձայն, մրցակիցներն իրավունք չունեն մինչեւ 30-րդ քայլը հաշտություն կնքել: Ոչ-ոքի ավարտվեցին Նիսիպյանու-Շիրով, Իվանչուկ-Ռաջաբով, Գելֆանդ-Կամսկի պարտիաները: 4 տուրից հետո աղյուսակը 2,5-ական միավորով շարունակում են գլխավորել Շիրովը, Իվանչուկն ու Գելֆանդը: Ռաջաբովն ունի 2, Կամսկին՝ 1,5, Նիսիպյանուն՝ 1 միավոր:

ՇԱԽՄԱՏ

# Արման Փաշիկյանի գերազանց մեկնարկը

Թբիլիսիի շախմատի գավաթի մրցաշարում գերազանց է մեկնարկել Հայաստանի այս տարվա չեմպիոն Արման Փաշիկյանը: Անցկացված 3 տուրից հետո նա հարյուր տոկոսանոց արդյունքով 10 շախմատիստների հետ գլխավորում է աղյուսակը: Առաջին տուրում Փաշիկյանը սեւերով հաղթեց Թեոնա Մեսխիին, ապա առավելության հասավ Աղասի Ինանցի եւ Սալոմե Մելիայի նկատմամբ:

Հայ շախմատիստներից 2-րդ արդյունքն ունեն Տիգրան Քոթանջյանն ու Գեւորգ Հարությունյանը, որոնց օգտին գրանցված է 2,5-ական միավոր: Քոթանջյանը հաղթել է Նատիա Ջալաբաձեին ու Յոզեֆ Կվիաշվիլուն ու ոչ-ոքի խաղացել Լուկա Պայչաձեի հետ: Գեւորգ Հարությունյանը պարտության է մատնել Նինո Անակիձեին ու Նոդար Լորտկիպանիձեին, ոչ-ոքի է խաղացել Նիկոլոս Չխաիձեի հետ: Դավիթ Պետրոսյանն ու Սուրեն Պողոսյանը վաստակել են 2-ական, Տիգրան Սիմոնյանն ու Լեւոն Բաբուջյանը՝ 1,5-ական միավոր:

# Հենրիխ Մխիթարյանը փորձաշրջան կանցնի «Մետալուրգում»

«Փյունիկի» եւ Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը փորձաշրջանի է մեկնել Դոնեցկի «Մետալուրգ»: Ինչպես հայտնի է, այս թիմում է հանդես գալիս «Բանանցի» կիսապաշտպան Արարատ Առաքելյանը, որն իր արձակուրդը Երեւանում անցկացնելուց հետո կրկին միացել է «Մետալուրգի» իր թիմակիցներին: Իսկ «Մետալուրգը» գլխավորում է «Բանանցի» նախկին գլխավոր մարզիչ, բուլղարացի մասնագետ Նիկոլայ Կոստովը, որն օրերս եւս 3 տարով երկարաձգել է պայմանագիրն ակումբի հետ:



Առայժմ պարզ չէ, թե ինչպես կդասավորվեն Հենրիխ Մխիթարյանի գործերը Դոնեցկի «Մետալուրգում»: Ամեն դեպքում, նրա կարիքը «Փյունիկում» շատ կզգացվի, մանավանդ եվրոգավաթների մրցաշարում: Թեեւ ըստ շրջանառվող լուրերի, շուտով «Փյունիկում» հանդես են գալու բրազիլացի Մարկոսը եւ Էդգար Մանուչարյանը: Ինչ խոսք, եթե այդ լուրերը հաստատվեն, ապա «Փյունիկը» զգալիորեն կամրապնդի իր կազմը: Ճիշտ է, հայտնի չէ, թե ինչպիսի մարզավիճակում է Մարկոսը, որն «Արարատից» տեղափոխվել էր Փարիզի «Արարատ»: Ամեն դեպքում, ուրախալի կլինի, որ Մարկոսը կրկին հանդես գա ՀՀ առաջնությունում:

Դոնեցկի «Մետալուրգն» արդեն պայմանագիր է կնքել երկու նոր ֆուտբոլիստների՝ Ալեքսեյ Գոդինի եւ Մուսավենկոսի Մգունիի հետ: Վերջինս Զիմբաբվեի ուժեղագույն հարձակվողներից է, 3 տարի հանդես է եկել Կիպրոսի «Օմոնիայի» կազմում, իսկ վերջին 7 ամիսներին խաղում էր Արաբական Միացյալ Էմիրությունների «Ալ Շաբաբ» թիմում: Նա բարձրահասակ, ֆիզիկապես ամրակազմ ֆուտբոլիստ է: Այսպիսի բնութագրում է տվել նորեկին «Մետալուրգի» մարզական տնօրեն Վարդան Իսրայելյանը՝ «Բանանցի» նախագահ Սարգիս Իսրայելյանի հարազատ եղբայրը:

Անցած մրցաշրջանում Դոնեցկի «Մետալուրգը» զբաղեցրել էր 4-րդ տեղը եւ իրավունք է ստացել մասնակցելու եվրոլիգայի խաղարկությանը: Հունիսի 20-ին թիմն ուսումնամարզական հավաքի է մեկնելու Ավստրիա, որտեղ 4 ստուգողական խաղ է անցկացնելու:

# Օլիմպիական օրվա միջոցառումները Հայաստանում

Հունիսի 23-ը միջազգային օլիմպիական կոմիտեի (ՄՕԿ) հիմնադրման օրն է: Ուստի այն նշվում է որպես օլիմպիական օր (ազգային օլիմպիական կոմիտեներն այն իրենց ցանկությամբ կարող են անցկացնել մեկ շաբաթվա տարբերությամբ): Հայաստանում «Վազքարշավ-2009»-ը նշանակված է հունիսի 20-ին:

Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի մամուլի պատասխանատու Նաթելա Հովսափյանից, միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահ, բելգիացի Ժակ Ռոգեն օլիմպիական օրվա առթիվ ուղերձ է հղել աշխարհի բոլոր ազգային օլիմպիական կոմիտեներին, նրանց թվում նաեւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեին: Ուղերձում մասնավորապես ասված է. «Հունիսի 23-ին անցկացվող օլիմպիական օրը տարբերվում է բոլոր ազգային եւ այլ տոնակատարություններից: Այդ տոնը չի պատկանում որեւէ երկրի, չի մեծարում որեւէ անձի, չի նշանավորում հաղթանակ, կամ՝ մարզական իրադարձություն: Դա օլիմպիական շարժման ամենամյա համաշխարհային միակ միջոցառումն է: Դա միասնության օր է: Բոլոր մայրցամաքների ԱՕԿ-ներն այդ օրը փորձում են տարբեր տարիքի եւ սեռի մարդկանց ներարկել օլիմպիական ոգին: Հուսով ենք այդպես կշարունակվի ընդմիշտ:

2009-ի օլիմպիական օրվա նշանաբանն է. «Շարժվել, սովորել, բացահայտել»: Պահպանելով վազքարշավի բոլոր ավանդույթները, կոչ եմ անում բացահայտել նաեւ օլիմպիական շարժման բոլոր ուղղությունները: Միջոցառման ծրագրում ընդգրկելով այնպիսի մարզաձեւեր, որոնք ունեն դաստիարակչական եւ մշակութային նշանակություն: Ասել է թե՝ նորարարական բազմաթիվ նախաձեռնություններ իրականացնելու հիանալի հնարավորություն է տրված ԱՕԿ- ներին»: «Վազքարշավ-2009»-ին մասնակցում են 13-ից բարձր տարիքի բոլոր երկսեռ վազքասերները, նրանց թվում՝ սայլակավոր մարզիկները: Միջոցառումը ՄՕԿ-ի հովանու ներքո կազմակերպում եւ անցկացնում է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն, որի նախագահն է անվանի գործարար Գագիկ Ծառուկյանը:

Հայաստանի բոլոր մարզերում եւ ԼՂՀ-ում նույնպես անցկացվում են մարզական միջոցառումներ: Օլիմպիական օրվա շրջանակներում Երեւանյան լճում մրցում են բայդարկավարները, Նորագավիթում՝ սուսերամարտիկները, «Դինամոյում»՝ ձյուդոիստները, Երեւանի պետական մարզական քոլեջում՝ Կալինինգրադի մարզի եւ Հայաստանի պատանի բռնցքամարտիկներն ու ըմբիշները, Աշտարակում՝ անվավոր դահուկորդները, իսկ Հանրապետության հրապարակում օդակաձեւ երթ կանցկացնեն հեծանվորդները:

Մայրաքաղաքում մեկնարկը կտրվի հունիսի 20-ին, 9 անց 45-ին Հանրապետության հրապարակում: Երթուղին ձգվում է Ամիրյան փողոց-Մաշտոցի պողոտա-տորգետնյա անցում-«Հաղթանակի կամուրջ»-«Հրազդան» մարզադաշտի հարավային հրապարակ:

Վեց տարիքային խմբով անցկացվող վազքարշավի հաղթողները եւ մրցանակակիրները կստանան ՀԱՕԿ-ի պատվոգրեր, հուշանվերներ, իսկ մասնակիցները՝ մարզաշապիկներ:

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 8.QXD 6/18/2009 10:57 PM Page 1





# Ագուլիսի 17-րդ դարի Ավետարանը նվիրաբերվեց Մատենադարանին

Իրանահայ բարերար Ժենյա Այդինյանը բնակվում է Մ. Նահանգներում, սակայն ապրում է հայաստանյան հոգսերով ու ցավերով, ամեն պահ մտածելով ծնողազուրկ երեխաների, հաշմանդամ պատանիների, անօգնական ծերերի, նյութապես անապահով ուսանողների ու բոլոր նրանց մասին, ովքեր կարիք ունեն հոգածության՝ այս աշխարհում իրենց անպաշտպան չզգալու համար:

Բարեգործությունը նրա համար կենսաձեւ դարձավ 12 տարի առաջ, երբ Մ. Նահանգներում ամուսնացնում էր միջնեկ որդուն: Հարսանիքից առաջ բարեկամներին ու ընկերներին խնդրեց հրաժարվել նվերներ գնելու գաղափարից եւ նախատեսված գումարը նվիրաբերել Հայաստանի որբ երեխաներին: Այդպես 1992-ին հիմնեց Հայաստանի մանկատների հիմնադրամը, իրականացրեց «Մեկ ընտանիք, մեկ հայրենիք» ծրագիրը, վերանորոգեց դպրոցներ, ծերանոցներ, գթության ճաշարաններ մեկնեց հաշմանդամներին: Այդ ժամանակվանից ի վեր սկիզբ առավ համագործակցությունը Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հետ, համատեղ իրականացվեցին բազում ծրագրեր, որոնք շարունակվում են նաեւ այսօր:

Ժենյա Այդինյանը ծնվել է Թեհրանում, սակայն կյանքի մի մասն անցկացրել է Անգլիայում, որտեղից 1980-ականներին տեղափոխվել է Մ. Նահանգներ: Հայաստան այցելում է գրեթե 3 - 4 ամիսը մեկ, որովհետեւ անելիքները շատ են, ամեն այցի ժամանակ ծնվում են նոր բարեգործություններ: Անցած շաբաթ նա Մաշտոցի անվան Մատենադարանին նվիրաբերեց Ագուլիսի Սբ Աստվածածին եկեղեցում 1622-ին գրված Ավետարանը, որը որպես տոհմական մասունք փրկել եւ Հայաստան էր բերել իր 4 զավակների հետ 19-րդ դ. Նախիջեւանից գաղթած Մանգասարը: Նրա ժառանգները երկար տարիներ աչքի լույսի պես էին պահպանել տոհմական սուրբ մասունքը՝ այդպես էր ավանդվել իրենց: Երբեք չէին մտածել ձեռագիրը վաճառելու մասին, դեռ 1970-ականներից Ավետարանն ի պահ էին տվել Մատենադարանին, սակայն կյանքի դժվարությունները հարկադրեցին վաճառել այն: «Այս Ավետարանը մեր տոհմական սրբությունն է եղել, վաճառելու մտադրություն բնավ չենք ունեցել, բայց որոշ հանգամանքներ ստիպեցին այդ քայլին գնալ: Ուրախ եմ, որ մեծարժեք ձեռագիր է, հրաշալի պահպանված, իսկ թե ինչպես է հասել Հայաստան, այդ պատմության մանրամասները, ցավոք, մեզ չեն փոխանցվել», ասաց ձեռագրի իրավական տերը՝ Տիգրան Մանգասարյանը, որը հայտնի ֆոտոլրագրող, կյանքից անժամանակ հեռացած Ռուբեն Մանգասարյանի եղբայրն է: Հենց նրանից էլ Ժենյա Այդինյանը գնեց Ավետարանն ու մեկընդմիշտ հանձնեց Մատենադարանին:



«Մենք ցանկանում ենք, որ այն ամենն, ինչ կա սփյուռքում, վերադառնա հայրենիք: Ես էլ եմ ուզում վերադառնալ հայրենիք եւ իմ հողի վրա ապրել: Երբ այսպիսի մի գիրք, մի մասունք գտնվեց եւ եկավ իր տուն, իր հայրենի հողի վրա, դրանից բարձր արժեք եւ մեծ ուրախություն չկա մեզ համար: Հուսով եմ, մեր հայրենակիցները կլսեն ձայնս եւ այդպիսի բոլոր գրվածքները կհանձնեն Մատենադարանին: Ես սիրով կհովանավորեմ, եթե կան այդպիսիք», ասաց **Ժենյա Այդինյանը**:

Մատենադարանի տնօրեն **Հրաչյա Թամրազյանը** երախտագիտությամբ լի խոսքեր հղեց բարերարին. «Հիմա ձեր բոլոր ճանապարհների խաչմերուկում, ձեր կյանքի կիզակետում հայտնվեց մաշտոցյան Մատենադարանը, շնորհիվ եզակի մի ձեռագրի՝ 1622 թվականի Ագուլիսի Դաշտ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում գրված ու ծաղկված մեծարժեք Ավետարանի նվիրաբերման: Այն ձեր բյուրավոր բարեգործությունների մի յուրատեսակ խորհրդանիշն ու առհավատչյան կդառնա, իր հավերժական տեղը գտնելով մեր հոգեւոր գանձարանում: Իսկ ձեր անունն այսուհետեւ իր արժանի տեղը կգտնի Մատենադարանի նվիրատուների շարքում: Ձեր անցած ուղին բացառիկ նվիրումի, հոգեւոր սխրանքների մի լուսածիր է, որ իր մեջ է բոլորել բյուրավոր մարդկանց, բացառիկ ճակատագրեր: Դուք բարություն եք սփռել ձեր ճանապարհին, մարդկային անհուն սեր ու ջերմություն պարգեւելով բոլորին: Ձեր կյանքն անանձնական սիրո, անհուն գթության դրսեւորում է: Դրա վկայությունն են ձեր կառուցած որբանոցները, հազարավոր երեխաները, որոնցից շատերը ձեր հոգեզավակներն են դարձել»:



ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# Հայրենասիրական երգեր երգողը չի հիշում գոնե մեկ ազգային հերոսի անուն

**Հունիսի 18-ին «Արմաս» ակումբում լրագրողներին հանդիպեց «Հայ թիմ» խմբի Միշոն: Արդեն չորս տարի հայկական շոու բիզնեսում հիփ- հոփ ոճով է հանդես գալիս նա: «Հայ տղերք»-ը պառակտվել է, դարձել է «Հայ թիմ» եւ համալրվել եւս մի քանի կատարողներով: Երաժշտասեր հասարակության զգալի մասը հակակրանք է տածում այսպիսի կատարողների հանդեպ: Նրանք ոչ միայն հնչեցնում են ժարգոնային, փողոցային խոսք, այլեւ հանդես են գալիս այդպիսի կերպարներով: «Հաղթանակի սերունդ» կազմակերպության աջակցությամբ ստեղծվել է «Պատասխան եք տալու» երգը: Այս երգը մեծ աղմուկ է բարձրացրել հանրության մեջ: Շատերը մտածում են, որ հայ-թուրքական կամ հայ-ադրբեջանական հարաբերությունների մեջ ինչ-որ չափով ագրեսիա է ստեղծվում: Եթե նույնիսկ արտաքին քաղաքականության մեջ դեր չունենա, ներքաղաքական ազդեցություն կունենա: Այս երգն ավելի կբորբոքի ազգագրական եւ ժողովրդական երգ սիրող հասարակությանը: «Պատասխան եք տալու» երգը, ըստ Միշոյի եւ նրա երկրպագուների, հայրենասիրական երգ է: Եվ այն հիշեցնում է անցյալը, որ երիտասարդները չմոռանան: Նա նշեց, որ իր երգերը պատերազմի չեն մղում երիտասարդներին՝ եւ եթե պատերազմ լինի, նա առաջինը կգնա: Լրագրողի այն հարցին, թե գիտե՞ք ազգային հերոսի անուն, Միշոն պատասխանեց, որ շատ, բայց ածականներով ասեք՝ կհիշեմ: Դժվար թե այսպիսի պատասխան լսեինք որեւէ այլ հայրենասիրական երգ կատարողից: Բնականաբար պետք չէ համեմատել ոճերը, բայց եթե երգում ես հայրենասիրություն եւ դա կրելու է շարունական բնույթ, լավ կլինի ճանաչես քո պատմությունն ու նախնիներին: «Իմ երկրպագուները 20-30 տարեկաններն են: Ես երգում եմ նրանց համար: Իսկ ավելի փոքր տարիքը սիրում է իմ կերպարը», նշեց Միշոն: Շատ ցավալի է, որ հայրենասիրությունը պրոպագանդում են նման կերպարով երիտասարդները:**

**Հայրենասիրական երգերը, որոնք երգվել են մարտի դաշտ գնալուց առաջ կամ հաղթանակի ժամանակ, այժմ երգում են գռեհիկ կատարողները:**

ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Մրցույթի հրավեր 076/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Էրեբունի Պլազայի 6-րդ հարկի ԵՄ ծրագրի գրասենյակի վերաձեւավորման եւ վերանորոգման համար: Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից՝ Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 կամ 119 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ հունիսի 30, ժամը 17:00:

## Letter of Invitation 076/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of Remodeling and Renovation EU Project Office on EREBUNI Plaza 6th Floor works. Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am/?page=TendersAnnouncements** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00 to 16:00. Tel: 56 60 73 +126 or 119 (Grigor Akhnoyan).

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 30 June 2009, 17:00 local time.

## Դասախոսական կազմի ընդունելություն Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամում (ՀՖՀՀ)

Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամը միջպետական բուհ է, որը շնորհում է Ֆրանսիայի եւ Հայաստանի պետական նմուշի դիպլոմներ (Licence/Բակալավրիատ, Master/Մագիստրատուրա), որոնք հաստատված են Բոլոնիայի համաձայնագրով:

2009-2010 ուստարվա ընդունելության համար Հայաստանում ֆրանսիական համալսարանն աշխատանքի է հրավիրում դասախոսների հետեւյալ առարկաների գծով.

Իրավաբանություն
Ֆինանսներ, հաշվապահություն, աուդիտ
Մարքեթինգ
Տնտեսագիտություն
Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) ֆրանսերեն եւ ուսանողների ղեկավարման համար պատասխանատու փորձառու դասախոս (նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործում)
Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) անգլերեն

Ներկայացվող պահանջները
✓ Գիտությունների թեկնածու
✓ Մասնագիտական փորձ
✓ Դասավանդման փորձ
✓ Ֆրանսախոս կամ անգլախոս

Աշխատավարձը կախված է որակավորումից:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը ՀՖՀՀ-ի գլխավոր քարտուղար պ. Ալեքսանդր Մարտինեսին, **secretaire_general@ufar.am**

- ինքնակենսագրություն (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)
- մոտիվացիոն նամակ (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)

Դիմումները ներկայացնել մինչեւ 2009թ-ի հունիսի 30-ը:

Հարցազրույցի կհրավիրվեն ընտրված թեկնածուները:

ՀՖՀՀ-ին մանրամասն ծանոթանալու համար այցելել մեր ինտերնետային կայք www.ufar.am կամ զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 10:00-17:00, (010) 24 96 64:




**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 18.06.2009 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 367.11 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 510.69 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 11.78 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 222.92 |

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 18.06.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: